


1933

2946

Բ. ՍՏԱԼԻՆ



ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

3K33
Ս-23

ԿՈՒՍՅՐԱՏ

1933 ՅԵՐԵՎԱՆ

3K33 114
4-23

08 JUN 2005

14 NOV 2000


Ի. ՍՏԱԼԻՆ

**ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՌԿ(Բ)Կ 12-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՍԱՐԻՆ
(17---25 ԱՊՐԻԼԻ 1923 Բ.)

**ԿՈՒՍՅՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ**

Թար
Հայկ
Սրբա
Հանձ
Ստոր
Հրատ
Կուս





1464
41

Ընկերներ, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յերրորդ անգամն է, վոր մենք քննում ենք ազգային հարցը. առաջին անգամ՝ VIII համագումարում, յերկրորդ անգամ՝ X համագումարում և յերրորդ անգամ՝ XII համագումարում: Արդյոք այս նշան չէ՞ այն բանի, վոր ազգային հարցի նկատմամբ մեր հայացքների մեջ սկզբունքային վորևէ բան փոխվել է: Վնչ, ազգային հարցի նկատմամբ մեր սկզբունքային հայացքը մնացել է նույնը, ինչ եր մինչև Հոկտեմբեր և Հոկտեմբերից հետո: Բայց X համագումարից մինչև այժմ փոխվել են միջազգային հանգամանքները՝ հեղափոխության այն ծանր ոեղերգիների տեսակարար կշռի իմաստով, ինչպիսիք այժմ Արևելքի յերկրներն են: Նախ՝ այդ Յերկրորդ՝ X համագումարից հետո մեր կուսակցության ներսում նույնպես կատարվել են նեպի հետ կապված միքանի փոփոխություններ: Այս բոլոր Փակտորները պետք է հաշվի առնել, ամփոփել դրանք: Այդ իմաստով XII համագումարում կարելի յե խոսել ազգային հարցի նոր դրվածքի մասին:

Ազգային հարցի միջազգային նշանակությունը: Ձեզ հայտնի յե, ընկերներ, թե մենք ինչ ենք ներկայացնում, մենք, խորհրդային Ֆեդերացիան, այժմ պատմական բախտի կամքով հանդիսանում ենք համաշխարհային հեղափոխության առաջավոր ջրկատը: Ձեզ հայտնի յե, վոր առաջինը մենք ձեզքեցինք ընդհանուր կապիտալիստական Ֆրոնտը՝ բախտի կամքով հայտնվելով ամենքից առաջ: Ձեզ հայտնի յե, վոր մենք մեր առաջխաղացման միջոցին հասանք մինչև Վարշավա, իսկ հետո նահանջեցինք, ամբանալով այն դիրքերում, վոր մենք ավելի ամուր համարեցինք: Այդ մոմենտից մենք անցանք նեպին, և այդ մոմենտից մենք հաշվի առանք միջազգային հեղափոխական շարժման տեմպի դանդաղումը, այդ մոմենտից մեր քաղաքականությունը դարձավ արդեն

վոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական: Առաջ անցնել նրանից հետո, յերբ մենք Վարչավայի տակ անհաջողութուն կրեցինք (չթագցնենք ճշմարտութունը), առաջ անցնել մենք չեյինք կարող, քանի վոր մենք ռիսկ արած կլինեյինք կտրվել թիկունքից, իսկ մեր այդ թիկունքը գյուղացիական է, և, վերջապես, մենք ռիսկ արած կլինեյինք չափազանց հեռանալու հեղափոխության այն ռեզերվներէից, վոր մենք ունենք բախտի կամքով, արեւմտյան և արեւելյան ռեզերվներէից: Ահա թե ինչու մենք շրջադարձ ձեռնարկեցինք ներսում դեպի նեպը, և դրսում՝ դեպի առաջխաղացման դանդաղեցումը, վճռելով, վոր պետք է դադար առնել, բուժել մեր վերքերը՝ առաջավոր գնդի, պրոլետարիատի վերքերը, գյուղացիական թիկունքի հետ կոնտակտ ստեղծել, հետագա աշխատանք կատարել այն ռեզերվներում, վորոնք մեզնից հետ են մնացել—արեւմտյան ռեզերվներում և արեւելյան ծանր ռեզերվներում, վորոնք կազմում են համաշխարհային կապիտալիզմի հիմնական թիկունքը: Ահա այդ ռեզերվները՝ արեւելյան ծանր ռեզերվների, վորոնք միաժամանակ կազմում են համաշխարհային կապիտալիզմի թիկունքը, մասին է խոսքը, յերբ քննում ենք ազգային հարցը:

Յերկից մեկը,— կամ իմպերիալիզմի խոր թիկունքը՝ արեւելյան գաղութային և կիսագաղութային յերկրները՝ մենք կշարժենք, կհեղափոխականացնենք և դրանով կարագացնենք իմպերիալիզմի անկումը, և կամ այդ մեզ չի հաջողվի անել—ու դրանով կամրացնենք իմպերիալիզմը և դրանով կթուլացնենք մեր շարժման ուժը: Այսպես է դրված հարցը:

Բանն այն է, վոր մեր Հանրապետութունների Միութեան վրա ամբողջ Արեւելքը նայում է վորպես փորձադաշտի վրա: Կամ մենք այդ Միութեան սահմաններում ճիշտ կլուծենք ազգային հարցը՝ նրա գործնական կիրառման մեջ, կամ մենք այստեղ, Միութեան սահմաններում, ժողովուրդների միջև կսահմանենք իսկական յեղբայրական հարաբերութուններ, իսկական աշխատակցութուն, — և այն ժամանակ ամբողջ Արեւելքը կտեսնի, վոր հանձին մեր Ֆեդերացիայի նա ունի ազատագրութեան դրոշակ, ունի առաջավոր շոկատ, վորի հետքերով նա պիտի ընթանա, և այդ կլինի համաշխարհային իմպերիալիզմի փլուզումի սկիզբը: Կամ մենք այստեղ, ամբողջ Ֆեդերացիայի կազմի մեջ սխալ կկատարենք, կխախտենք անցյալում ճշմարտ ժողովուրդների հա-

վատը դեպի Ռուսաստանի պրոլետարիատը, Հանրապետութունների Միութեանից կխլենք այն ձգող ուժը, վոր նա ունի Արեւելքի աչքում, — և այն ժամանակ կշահի իմպերիալիզմը, մենք տանուլ կտանք:

Դրանուամեն է ազգային հարցի միջազգային նշանակութունը: Ազգային հարցը մեզ համար նշանակութուն ունի նաև ներքին դրութեան տեսակետից, վոչ միայն նրա համար, վոր նախկին գերիշխող ազգը քանակապես մոտ 75 միլիոն է, իսկ մնացած ազգութունները՝ 65 (այս համեմայն դեպս քիչ չէ), և վոչ միայն նրա համար, վոր անցյալում ճնշված ազգութունները բռնում են տնտեսական զարգացման համար ավելի պետքական ռալոններ և ռազմական ստրատեգիայի տեսակետից ավելի կարևոր պունկտեր, — վոչ միայն դրա համար, այլ ամենից առաջ նրա համար, վոր այս յերկու տարվա ընթացքում մենք մտքերինք այսպես ասած նեպը, իսկ դրա շնորհիվ ուսուսական նացիոնալիզմն սկսեց աճել, ուժեղանալ, առաջ յեկավ ամենովեխովյան գաղափարը, ցանկութուններ են պտտում խաղաղ ճանապարհով կառուցելու այն, ինչ չհաջողեց կառուցել Դեմոկրատիայի, այսինքն՝ ստեղծել այսպես ասած միասնական ու անբաժանելի:

Յեվ, այսպիսով, նեպի կապակցութեամբ մեր ներքին կյանքում յերևան է գալիս նոր ուժ — վելիկոուսական շովինիզմ, վոր բուն է դրել մեր հիմնարկներում, թափանցում է վոչ միայն խորհրդային, այլև կուսակցական հիմնարկները, վխտում է մեր Ֆեդերացիայի բոլոր անկյուններում և տանում դեպի այն դրութունը, վոր յեթե մենք այդ նոր ուժին վճռական հակահարված չտանք, յեթե մենք դրան արմատից չկտրենք, — իսկ նեպական պայմանները դրան սնուցում են, — մենք ռիսկ արած կլինենք կանգնելու նախկին գերիշխող ազգութեան պրոլետարիատի և անցյալում ճնշված ազգութունների գյուղացիների կապի խղման պատկերի առջև, վորպիսի հանգամանքը հավասար է պրոլետարիատի դժկատատուրայի խախտման:

Բայց նեպը սնուցում է վոչ միայն ուսուսական շովինիզմը, նա սնուցում է նաև տեղական շովինիզմները, մանավանդ այն հանրապետութունների մեջ, վորոնք ունեն միջանի ազգութուններ: Յես նկատի ունեմ Վրաստանը, Ադրբեյջանը, Բուխարան, մոտամբ կարելի յե ասել և Թուրքեստանի մասին, ուր կան միջանի ազգութուններ, վորոնց առաջավոր տարրերը գուցե

շուտով կսկսեն մրցել միմյանց հետ առաջնութեան համար: Տեղական այդ շովինիկներն, իհարկե, իրենց ուժով չեն ներկայացնում այն վտանգը, վոր ունի վելիկոռուսական շովինիզմը: Բայց դրանք համենայն դեպս վտանգ են ներկայացնում՝ սպառնալով միջանի հանրապետութիւններ դարձնել ազգային գծութեան ասպարեզ, այնտեղ խախտել ինտերնացիոնալիզմի կապերը:

Սրանք են միջազգային և ներքին բնույթի հիմունքները, վորոնք ընդհանուր առմամբ և ներկա մոմենտին առանձնապես վկայում են ազգային հարցի կարևոր, առաջնագույն նշանակութեան մասին:

Վերջն և ազգային հարցի դասակարգային ելութիւնը: Ի՞նչ է ազգային հարցը: Ազգային հարցի դասակարգային նշանակութիւնն է, — յես խոսում եմ մեր խորհրդային պայմանների մասին, — նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և անցյալում ճնշված ազգութիւնների գյուղացիութեան միջև ուղիղ փոխհարաբերութիւններ ստեղծելը: Զոդման հարցն այստեղ ավելի քան բավարար քննվեց, բայց ընկ. ընկ. Կամենսկի, Կալինինի, Սոկոլոնիկովի, Նույնիսկ ընկ. Ռիկովի ու ընկ. Տրոցկու գեկուցումները աւթիվ զոդման հարցը քննելիս նկատի առնվեց գլխավորապես ողջ պրոլետարիատի հարաբերութիւնը գեոլի ողջ գյուղացիութիւնը: Այստեղ ազգային բնագավառում գոյութիւն ունի ավելի բարդ մեխանիկա: Այստեղ հարցը վերաբերում է ուղիղ փոխհարաբերութիւններ սահմանելուն՝ նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի՝ վոր մեր ամբողջ Ֆեդերացիայի պրոլետարիատի ավելի կուլտուրական խաֆն և ներկայացնում՝ և գյուղացիութեան, գերազանցապես անցյալում ճնշված ազգութիւնների գյուղացիութեան միջև: Այս է ազգային հարցի դասակարգային ելութիւնը: Յեթե պրոլետարիատին հաջողվի ոտարազգի գյուղացիութեան նկատմամբ սահմանել այնպիսի հարաբերութիւններ, վոր կարող լինեն վերացնել անվստահութեան բոլոր ֆոնդերը գեոլի այն ամենը, ինչ ողջական է, ինչ տասնյակ տարիներով սնուցվել ու խորացվել է ցարիզմի քաղաքականութեամբ, ավելին՝ յեթե ողջ պրոլետարիատին հաջողվի ձգտել և հասնել փոխադարձ լրիվ ըմբռնման և վստահութեան, իսկական միութիւն սահմանել վոչ միայն ողջ պրոլետարիատի և ողջ գյուղացիութեան միջև, այլև ողջ պրոլետարիատի և ոտարազգի գյուղացիութեան միջև, ապա խնդիրը լուծված կլինի: Դրա համար

անհրաժեշտ է, վոր պրոլետարիատի իշխանութիւնն ուրիշ ազգութիւնները գյուղացիութեան համար նույնքան հարազատ լինի, ինչպէս և ողջ գյուղացիութեան համար: Յեւ վորպեսզի Սորհրդային իշխանութիւնը հարազատ դառնա նաև ուրիշ ազգութիւնների գյուղացիութեան համար, անհրաժեշտ է, վոր նա հասկանալի լինի նրան, վոր նա գործի մայրենի լեզվով, վոր դպրոցներն ու իշխանութեան որգանները կառուցվեն տեղական մարդկանցով, վորոնք գիտեն լեզուն, բարբերը, սովորութիւնները, կենցաղը: Միայն այդ դեպքում և միայն այդ չափով Սորհրդային իշխանութիւնը, վոր մինչև վերջին ժամանակներս ողջական իշխանութիւն էր, կդառնա իշխանութիւն վոչ միայն ողջական, այլև ազգամիջյան, անցյալում ճնշված ազգութիւնների գյուղացիութեան համար հարազատ, յերբ այդ յերկրների հանրապետութիւնների մեջ հիմնարկութիւններն ու որգանները կխոսեն ու կգործեն մայրենի լեզվով: Այս է ազգային հարցի հիմքերից մեկն ընդհանուր առմամբ և առանձնապես խորհրդային միջավայրում:

Ներկայումս, 1923 թվին, վերջն և ազգային հարցի լուծման բնորոշ գիծը: Ազգային գծով լուծում պահանջող հարցերն ի՞նչ ձև են ընդունել 1923 թվին: Մեր Ֆեդերացիայի ժողովուրդների միջև գործակցութիւն սահմանելու ձև՝ անտեսական, ուղղական, քաղաքական գծով: Յես նկատի ունեմ ազգամիջյան հարաբերութիւնները: Ազգային հարցը, վոր իր հիմքում ունի նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և ուրիշ ազգութիւնների գյուղացիութեան միջև ճիշտ հարաբերութիւններ սահմանելու խնդիրները, ներկայումս ընդունում է այն ժողովուրդների աշխատակցութիւնն ու յեղքայրական կենակցութիւնը սահմանելու հատուկ ձևը, վորոնք առաջ անջատված էին և վորոնք այժմ միավորվում են միասնական պետութեան շրջանակներում: Ահա ազգային հարցի ելութիւնն այն ձևով, վոր ընդունվել է 1923 թվին: Պետական այդ միավորման կոնկրետ ձևը ներկայացնում է Հանրապետութիւնների այն Միութիւնը, վորի մասին մենք խոսել ենք դեռ անցյալ տարվա վերջում՝ Սորհրդային Համագումարում, և վորին մենք ձեռք զարկեցինք այն ժամանակ:

Այդ Միութեան հիմքն է— Միութեան անդամների կամավորութիւնն ու իրավահավասարութիւնը: Կամավորութիւն և հավասարութիւն այն պատճառով, վոր մեր ազգային ծրագրի յեղա-

կեան այն կեան է, վորով ազգություններին տրվում է ինքնուրույն պետական գոյության իրավունք, այն, ինչ առաջ կոչվում էր ինքնորոշման իրավունք: Յեկնելով դրանից, մենք պետք է վորոշակի ասենք, վոր ժողովուրդների վնչ մի միություն, ժողովուրդների վնչ մի միավորում՝ միասնական պետության մեջ չի կարող լինել հաստատուն, յեթե այդ հիմնված չի լրիվ կամավորության վրա, յեթե տվյալ ժողովուրդը, յեթե իրենք ժողովուրդները չեն ցանկանում միավորվել: Յերկրորդ հիմունքը՝ իրավահավասարությունն է այն ժողովուրդների, վորոնք մտնում են Միության կազմի մեջ: Յեվ այդ հասկանալի յե: Յես չեմ խոսում փաստական հավասարության մասին, այդ մասին յես կխոսեմ հետագայում, քանի վոր փաստական հավասարության սահմանումը առաջ անցած ազգությունների և հետամնաց ազգությունների միջև շատ բարդ, շատ դժվար գործ է, վոր պահանջում է մի շարք տարիներ: Յես այստեղ խոսում եմ իրավական հավասարության մասին: Հավասարությունն այստեղ արտահայտվում է նրանով, վոր բոլոր հանրապետությունները, տվյալ դեպքում 4 հանրապետությունները—Անդրկովկասը, Բելոռուսիան, Ուկրաինան և ՌՍՖՍՀ, վոր մտնում են Միության կազմի մեջ, հավասարաչափ ոգտվում են Միության բարեքններից և միաժամանակ հավասարաչափ հրաժարվում անկախության իրենց միքանի իրավունքներից՝ հողատ Միության: Յեթե ՌՍՖՍՀ, Ուկրաինան, Բելոռուսիան, Անդրկովկասյան հանրապետությունները չեն ունենալու Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ, ապա պարզ է, վոր այդ Արտգործժողովումաները վերացնելով և ընդհանուր Արտգործ-ժողովմատ ստեղծելով, Հանրապետությունների Միության մեջ տեղի կունենա վորոշ սահմանափակումն այն անկախության, վոր ունեյին այդ հանրապետությունները և վոր հավասարաչափ է սահմանափակված Միության մեջ մտած բոլոր հանրապետությունների համար: Պարզ է, վոր յեթե առաջ այդ հանրապետություններն ունեյին իրենց Արտառևտուրները, իսկ այժմ այդ Արտառևտուրները վերացվում են թե ՌՍՖՍՀ և թե այլ հանրապետությունների մեջ, վորպեսզի ստեղծենք ընդհանուր Արտառևտուր Հանրապետությունների Միության կից, — ապա այստեղ ել կատարվում է վորոշ սահմանափակումն այն անկախության, վոր առաջ գոյություն ունեյ լրիվ և վորն այժմ կըր-

ճատվեց հողատ ընդհանուր Միության և այլն և այլն: Վսմանք գուտ-սխոլաստիկական հարց են տալիս—բայց ի՞նչպես, միավորվելուց հետո հանրապետություններն արդյոք անկախ են մնում: Այդ հարցը սխոլաստիկական է: Նրանց անկախությունը սահմանափակվում է, քանի վոր ամեն տեսակի միավորում միավորվողների նախկին իրավունքների վորոշ սահմանափակում է: Բայց այստեղ անկախության տարրերն անպայման վերապահվում են ամեն մի հանրապետության, քանի վոր յուրաքանչյուր հանրապետություն իրավունք ունի Միության կազմից դուրս գալու միակողմանի կերպով: Ահա թե վորտեղ են անկախության տարրերը, ահա անկախության մաքսիմումը պոտենցիալում, վոր պահպանում է Միության մեջ մտած ամեն մի հանրապետություն և վոր նա միշտ կարող է իրագործել:

Ուրեմն ազգային հարցի կոնկրետ ձևը մեր հանդամանքներում ներկայումս դարձել է ժողովուրդների տնտեսական, արտաքին-քաղաքական և ռազմական գործակցության սահմանման հարց: Մենք այդ հանրապետությունները պետք է այդ գծերով միավորենք մի միության մեջ, վոր կոչվում է ՍՍՀՄ: Ազգային հարցի կոնկրետ ձևերը ներկայումս հանգել են սրան:

Բայց ասելը հեշտ է, կատարելը՝ դժվար:

Բանն այն է, վոր մեր հանգամանքներում մենք ունենք մի ամբողջ շարք ֆակտորներ, վորոնք վնչ միայն նպաստում են ժողովուրդների միավորմանը մի պետության մեջ, այլ դժվարացնում են այդ միավորումը:

Նպաստող ֆակտորները ձեզ հայանի յեն. — ամենից առաջ ժողովուրդների տնտեսական մերձեցումը, վոր սահմանված է յեղել դեռ մինչև Խորհրդային իշխանությունը և ամրապնդված է Խորհրդային իշխանությամբ, աշխատանքի վորոշ բաժանումը ժողովուրդների միջև, վոր սահմանված է յեղել մեզինից առաջ և ամրապնդված է մեր կողմից Խորհրդային իշխանությամբ, — այն հիմնական ֆակտորն է, վոր նպաստում է հանրապետությունների միավորմանը մեր Միության մեջ: Միավորման նպաստող յերկրորդ ֆակտորը պետք է համարել Խորհրդային իշխանության քնությունը: Այս հասկանալի յե: Խորհրդային իշխանությունը քանվորների իշխանությունն է, պրոլետարիատի ղեկտատուրան, վորն իր բնությամբ տրամադրում է, վոր Միության մեջ մտնող հանրապետությունների ու ժողովուրդների աշխատավոր տար-

րերը փոխադարձ բարեկամական հարաբերությունները մեջ գտնվեն: Այս հասկանալի յե: Յեվ յերրորդ ֆակտորը, վոր նպաստում է միավորմանը, այդ իմպերիալիստական ողակումն է, վոր կազմում է այն միջավայրը, վորի պայմաններում ստիպված է գործել Հանրապետությունների Միությունը:

Բայց կան նաև այնպիսի ֆակտորներ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում այդ միավորմանը, արդեթևակում են այդ միավորումը: Հիմնական ուժը, վոր դժվարացնում է հանրապետությունների միավորումը մի միասնական միության մեջ, այդ այն ուժն է, ինչպես յես արդեն ասացի, վորը նեպի պայմաններում ծայր է առնում մեզ մոտ, այդ վելիկոուսական շովինիզմն է: Ամենավին պատահական չէ, ընկերներ, վոր ամենովեխովականները բազմաթիվ կողմնակիցներ են ձեռք բերել խորհրդային չինովիկները շրջանում: Ամենևին պատահական բան չէ և այն, վոր պարոնայք ամենովեխովականները գովաբանում են կոմունիստ-բայր շեխներին, կարծես ասելով. — դուք բայր շեխներ, մասին ինչքան ուզում եք խոսեք, ձեր ինտերնացիոնալ տեղեկացների մասին ինչքան ուզում եք դուրս ավելք, իսկ մենք գիտենք, վոր այն, ինչ չհաջողեց անել Դենիկինը, այդ կանք դուք, և վոր մեծ Ռուսաստանի մեծ իդեան դուք, բայր շեխներ, վերականգնեցիք, կամ դուք այն, համենայն դեպս, կվերականգնեք: Այս բոլորը պատահական չէ: Պատահական չէ այն, վոր այդ իդեան թափանցել է նույնիսկ մեր կուսակցության միքանի հիմնարկները: Յես վկա յեմ յեղել այն բանին, թե ինչպես փետրվարյան պլենումին, ուր առաջին անգամ դրվեց յերկրորդ պարտի հարցը, Կենտկոմի կազմից լավեցին կոմունիզմին չհամապատասխանող ձառեր, այնպիսի ձառեր, վորոնք վոչ մի ընդհանուր բան չունեն ինտերնացիոնալիզմի հետ: Այս բոլորը՝ ժամանակի հատկանիշ է, ախտ է: Հիմնական վտանգը, վոր բղխում է այստեղից, այն վտանգը, վոր բղխում է նրանից, վոր նեպի հետևանքով մեզ մոտ վոչ թե որերով, այլ ժամերով է աճում մեծապետական շովինիզմը, ամենակոպիտ նացիոնալիզմն է, վոր ջանում է ջնջել այն ամենը, ինչ ուսական չէ, ջանում է կառավարման բոլոր թեղերը հավաքել ուսական սկզբունքի շուրջը և ճնշել վոչ-ուսականը: Հիմնական պատճառն այն է, վոր այդպիսի քաղաքականության դեպքում մենք ուսի արած կլինենք կորցնելու անցյալում ձեռնված ժողովուրդների կողմից դեպի ուսական պրոլետարները

տաժած այն վստահությունը, վոր նրանք ձեռք բերին հոկտեմբերյան որերին, յերբ ոուս պրոլետարները դեն շարտեցին կալվածատերերին, ոուս կապիտալիստներին, յերբ նրանք՝ ոուս պրոլետարները ջնջեցին ազգային ճնշումը, դուրս բերին զորքերը Պարսկաստանից, Մոնղոլիայից, հայտարարեցին Ֆինլանդիայի, Հայաստանի անկախությունը և առհասարակ ազգային հարցը բոլորովին նոր հիմքի վրա դրին: Այն վստահությունը, վոր մենք ձեռք բերինք այն ժամանակ, կարող ենք միանգամայն կորցնել, յեթե մենք բոլորս չզինվենք այդ նոր, կրկնում էմ, մեծապետական շովինիզմի դեմ, վորն անդեմ, անկերպարանք սողում է՝ կաթիլ առ կաթիլ ծծվելով մեր աշխատողների ականջներն ու աչքերը, կաթիլ առ կաթիլ փոխելով նրանց վոզին, նրանց ամբողջ հոգին այնպես, վոր այդ աշխատողներին միանգամայն չճանաչելու վտանգ է սպառնում: Ահա այս վտանգը, ընկերներ, մենք պետք է՝ ինչ գնով էլ լինի՝ վերացնենք, այլապես մեզ սպառնում է անցյալում ճնշված ժողովուրդների բանվորների ու գյուղացիների վստահությունը կորցնելու հեռանկարը, մեզ սպառնում է այդ ազգությունների և ոուսական պրոլետարիատի միջև յեղած կապի խզման հեռանկարը, և հենց դրանով մեզ վտանգ է սպառնում թույլ տալու մի ձեռք՝ մեր դիկտատուրայի սիստեմում: Մի մոռացեք, ընկերներ, վոր յերբ մենք պարզված դրոշակներով գնացինք Կերենսկու դեմ և տապալեցինք ժամանակավոր կառավարությունը — այդ, ի միջի այլոց, այն պատճառով էր, վոր այնտեղ, մեր թիկունքում, մենք ունեյինք վստահություն ճնշված ժողովուրդների, վորոնք ոուս պրոլետարիատից ազատագրություն էյին սպասում: Մի մոռացեք այնպիսի ռեզերվների մասին, ինչպես ճնշված ժողովուրդները, վորոնք լուռ են, բայց իրենց լուռությամբ ճնշում են և շատ բան են վճռում: Հաճախ այդ չի դրացվում, բայց նրանք, այդ ժողովուրդները, ապրում են, նրանք կան, և նրանց մասին չի կարելի մոռանալ: Այո, ընկերներ, վտանգավոր է նրանց մասին մոռանալ: Մի մոռացեք, վոր յեթե մենք Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի և Յուդենիչի թիկունքում չունեյինք այսպես կոչված «այլզգիներ», չունեյինք անցյալում ճնշված ժողովուրդներ, վորոնք իրենց լուռ համակրությամբ դեպի ոուս պրոլետարները վտանգում էյին այդ գեներալների թիկունքը, — ընկերներ, այդ հատուկ ֆակտոր է մեր զարգացման մեջ՝ լուռ համակրանքը, այն վոչ վոք չի տեսնում ու չի լսում, բայց այդ վճռում է ամեն

ինչ— յեթե չլիներ այդ համակրանքը, մենք չեյինք կարող հաղթել այդ գեներալներին և վոչ մեկին: Այն միջոցին, յերբ մենք նրանց վրա եյինք գնում, նրանց թիկունքում սկսվեց քայքայում: Ինչո՞ւ: Վորովհետև այդ գեներալները հենվում էին կազակների կողմնակալության տարրերի վրա, իսկ ճնշված ժողովուրդները դրանց մեջ տեսնում էին իրենց հետագա ճնշման հեռանկարը, ճնշված ժողովուրդներն ստիպված էին մեր զինվորներին ազատագրութեան դրոշմը: Ահա թե ինչը վճռեց այդ գեներալներին բախտը, ահա այն ֆակտորների գումարը, վորոնք ծածկվեցին մեր զորքերի հաջողութունների հետև, բայց և վորոնք է վերջո վճռեցին ամեն ինչ: Այդ մոռանալ չի կարելի: Ահա թե ինչո՞ւ մենք պարտավոր ենք խիստ վարվել նոր շովինիստական տրամադրութեանների դեմ պայքարելու իմաստով և նախատինքի սյունին գամել մեր հիմնարկների այն շինություններին ու կուսակցական այն ընկերներին, վորոնք մոռանում են Հեղափոխության մեր նվաճումների մասին, անցյալում ճնշված ժողովուրդների վստահութեան մասին, վորոնց մենք թանգ պետք է գնահատենք:

Այս է առաջին և ամենավտանգավոր ֆակտորը, վոր դժվարացնում է ժողովուրդներին ու հանրապետութեաններին միասնական միութեան մեջ միավորելու գործը: Պետք է հասկանալ, վոր յեթե այնպիսի ուժ, ինչպիսին վերկոռուսական շովինիզմն է, փթթի ու ծավալվի,— վոչ մի վստահութեան անցյալում ճնշված ժողովուրդների կողմից չի լինի, վոչ մի աշխատակցութեան միասնական միութեան մեջ մենք չենք հաստատի, և մեզ մոտ վոչ մի Հանրապետութեանների Միութեան չի լինի:

Յերկրորդ ֆակտորը, ընկերներ, վոր արգելք է հանդիսանում անցյալում ճնշված ժողովուրդներին միավորվելու ուստ պրոլետարիատի շուրջը, այդ փաստական անվստահութեանն է, վոր մենք ժառանգել ենք ցարիզմի շրջանից:

Իրավական հավասարութեանը մենք ազդարարել ենք և կկիրառենք, բայց իրավահավասարութեանից, վոր ինքնին մեծազույն նշանակութեան ունի Խորհրդային Հանրապետութեանների զարգացման պատմութեան մեջ, մինչև փաստական հավասարութեանը՝ այնուամենայնիվ հետև յե: Բոլոր հետամնաց ազգութեանները և բոլոր ցեղերը մեր Ֆեդերացիայի կազմի մեջ ձևականո-

րեն ունեն նույնքան իրավունքներ, ինչքան և առաջ անցած բոլոր մյուս ազգութեանները: Բայց ցավն այն է, վոր միքանի ազգութեաններ չունեն իրենց պրոլետարները, արդյունաբերական զարգացումը չեն անցել և նույնիսկ չեն սկսել, կուլտուրապես սարսափելի հետամնաց են և միանգամայն ի վիճակի չեն ոգտագործելու այն իրավունքները, վոր նրանց տվել է հեղափոխութեանը: Այս, ընկերներ, ավելի կարևոր հարց է, քան դրպրոցների հարցը: Այստեղ մեր ընկերներից վոմանք կարծում են, վոր ցցուն դարձնելով դպրոցների ու լեզվի հարցը, հենց դրանով կարելի յե լուծել հանգուցը: Մխալ է, ընկերներ, միայն դպրոցներով այստեղ վոչինչ անել չես կարող, դրանք, նույն այդ դպրոցները ծաղկում են, լեզուն նույնպես զարգանում է, բայց փաստական անհավասարութեանը հիմքն է բոլոր դժգոհութեանների և բոլոր բաղկումների: Այստեղ դպրոցներով և լեզվով ոճիքդ չես ազատի. այստեղ մեր կողմից անհրաժեշտ է իրական, սիստեմատիկ, անկեղծ, իսկական ոգնութեան ցույց տալ կուլտուրական և տնտեսական տեսակետից հետամնաց ազգութեանների աշխատավոր մասսաներին: Անհրաժեշտ է, վոր բացի դպրոցներից և լեզվից, Ռուսաստանի պրոլետարիատը ձեռք առնի ամեն միջոց, վոր ծայրամասերում, կուլտուրապես հետամնաց հանրապետութեանների մեջ,— իսկ նրանք հետ են մնացել վոչ իրենց մեղքով, այլ այն պատճառով, վոր առաջ նրանց վրա նայել են վորպես հումքի աղբյուրի,— անհրաժեշտ է ձգտել և հասնել այն բանին, վոր հանրապետութեաններում կառուցվեն արդյունաբերութեան ոջախներ: Այդ ուղղութեամբ մի շարք փորձեր կատարվել են: Վրաստանը Մոսկվայից վերցրել է մի գործարան, և այդ, հավանական է, շուտով կգործի: Բուխարան վերցրել է մի գործարան, թեև կարող է վերցնել չորս գործարան: Թուրքեստանը վերցնում է մի մեծ գործարան, և, այդպիսով, կան բոլոր տվյալները, վոր տնտեսական տեսակետից հետամնաց և պրոլետարիատից զուրկ այդ հանրապետութեանները պետք է իրենց մոտ ուստ պրոլետարիատի ոգնութեամբ արդյունաբերութեան ոջախներ հիմնեն, թեև կուղ փոքր ոջախներ, այնպես վոր այդ ոջախներում լինեն տեղական պրոլետարների խումբեր, վորոնք կարողանան ծառայել վորպես փոխանցող կամուրջ՝ ուստ պրոլետարիատի ու գյուղացիների և այդ հանրապետութեանների աշխատավոր մասսաների միջև: Ահա այս բնագավա-

ուում մենք պետք է լուրջ աշխատենք, և այստեղ միմիայն դրպրոցներով ու լեզվով ոճիքդ չես ազատի:

Բայց կա նաև յերրորդ փակտորը, վոր դժվարացնում է հանրապետութունների միավորումը մի միության մեջ, այդ առանձին հանրապետութուններում գոյութուն ունեցող նացիոնալիզմն է: Նեպն ազդում է վոչ միայն ուսու, այլև վոչ-ուսու բնակչության վրա: Նեպն ուժ է տալիս մասնավոր առևտրին և արդյունաբերությանը վոչ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև առանձին հանրապետութուններում: Ահա հենց այդ նեպը և դրա հետ կապված մասնավոր կապիտալը սնուցում, մեծացնում են նացիոնալիզմը Վրաստանում, Ադրբեջանում, Ուզբեկստանում և այլն: Իհարկե, յեթե չլիներ վեկիկոուսական շովինիզմը, վորը հարձակողական է, վորովհետև նա ուժեղ է, վորովհետև նա առաջ էլ ուժեղ էր և ճնշելու ու սեղմելու ունակութունները նա դեռ պահպանել է,— յեթե չլիներ վեկիկոուսական շովինիզմը, ապա, թերևս, տեղական շովինիզմը, վորպես պատասխան վեկիկոուսական շովինիզմի, գոյութուն ունենար, այսպես ասած, մի-նիմալ չափով, մինիատյուր տեսքով, վորովհետև հակաուսական նացիոնալիզմը վերջին հաշվով—ուսական նացիոնալիզմի հանդեպ, ոուսական շովինիզմի հանդեպ պաշտպանողական մի ձև է, պաշտպանվելու մի տեսակ այլանդակ ձև: Յեթե այդ նացիոնալիզմը լիներ միայն պաշտպանողական, դրա համար դեռևս կարելի յեր աղմուկ չբարձրացնել: Կարելի կլիներ մեր գործողութունների և մեր պայքարի ամբողջ ուժը կենտրոնացնել վեկիկոուսական շովինիզմի վրա, հուսալով, վոր քանի այդ ուժեղ թշնամին շուտ տապալվի, դրա հետ միասին կտապալվեն նաև հակաուսական շովինիզմը, վորովհետև դա, այդ նացիոնալիզմը, կրկնում էմ, վերջին հաշվով վեկիկոուսական նացիոնալիզմի ռեակցիան է, սրան վորպես պատասխան, վորոչ պաշտպանութուն: Այն, այդ այդպես կլիներ, յեթե տեղերում հակաուսական նացիոնալիզմը ոուսական նացիոնալիզմից բոլոր ռեակցիաներից ավելի հեռուն չգնար: Բայց ցա՛ղն այն է, վոր միքանի հանրապետութունների մեջ պաշտպանողական այդ նացիոնալիզմը դառնում է հարձակողական:

Վերջենք Վրաստանը: Այստեղ կա 30 տոկոսից ավելի վոչ-վրացական բնակչութուն: Դրանց թվում կան հայեր, արխազցիներ, աջարացիներ, օսեր, թուրքեր: Դրանց գլխավորում

են վրացիները: Վրացի կոմունիստների մի մասի մեջ հղացել է և ծայր է առնում այս իդեան—այնքան էլ ուշադրութուն չդարձնել այդ մանր ազգութունների վրա, նրանք ավելի քիչ կուլտուրական են, իբր թե ավելի քիչ են զարգացած, ուստի և նրանց կարելի յե ուշադրության էլ չառնել: Այս շովինիզմ է, ֆեասակար և վտանգավոր շովինիզմ, քանի վոր նա կարող է Վրացական փոքրիկ հանրապետութունը դարձնել գժտութունների ասպարեզ, և այս արդեն այն դարձրել է գժտութունների ասպարեզ:

Ադրբեջանը: Հիմնական ազգութունը կազմում են ադրբեջանցիները, բայց այստեղ կան նաև հայեր: Ադրբեջանցիների մի մասի մեջ էլ գոյութուն ունի նման տենդենց, յերբեմն չափազանց չքողարկված, վոր ասում է՝ այ, մենք ադրբեջանցիներըս բնիկներ ենք, իսկ նրանք՝ հայերը յեկվորներ են: Չի կարելի արդյոք այդ պատճառով նրանց մի քիչ հետ մղել, նրանց շահերը հաշվի չառնել: Այս էլ շովինիզմ է: Այս խախտում է ազգութունների այն հավասարութունը, վորի հիման վրա կաուուցվում է Խորհրդային իշխանութունը:

Բուխարան: Այնտեղ Բուխարայում կան յերեք ազգութուններ՝ ուզբեկներ—հիմնական ազգութունը, թուրքմեններ—բուխարական շովինիզմի տեսակետից՝ «նվազ կարևոր» ազգութուն և կիրզիզներ, սրանք այստեղ քիչ են և դրանք «նվազ կարեվոր» են:

Սորեզվում՝ նույնն է—թուրքմեններ և ուզբեկներ: Ուզբեկները հիմնական ազգութուն են, իսկ թուրքմենները՝ «նվազ կարևոր» ազգութուն:

Այս բոլորը տանում է դեպի կոնֆլիկտները, դեպի Խորհրդային իշխանության թուլացում: Տեղական շովինիզմի շայդ տենդենցը նույնպես պետք է արմատախիլ արվի: Իհարկե, վեկիկոուսական շովինիզմի համեմատությամբ, վոր ազգային հարցի ընդհանուր սիստեմում կազմում է ամբողջի յերեք քառորդը, տեղական շովինիզմն այնքան էլ կարևոր չէ, բայց տեղական աշխատանքի համար, տեղական մարդկանց համար, հենց ազգային հանրապետութունների խաղաղ զարգացման համար այդ շովինիզմն առաջնակարգ նշանակութուն ունի:

Այդ շովինիզմը յերբեմն սկսում է կրել շատ հետաքրքրական եվոլյուցիա: Յես նկատի ունեմ Անդրկովկասը: Դուք դիտեք, վոր

Անդրկովկասը բաղկացած է յերեք հանրապետութիւններից, վորոնք պարունակում են 10 ազգութիւն: Անդրկովկասը դեռ շատ վաղուց յեղել է շարժի ու գտութիւնների ասպարեզ, իսկ հետո, մենշելիզմի և նացիոնալիստների որոք—պատերազմի ասպարեզ: Չեզ հայտնի յե հայ-վրացական պատերազմը: Ջարդը 1904 թվի սկզբին և 1905 թվի վերջին՝ ձեզ նույնպես հայտնի յե: Յես կարող եմ հիշատակել մի ամբողջ շարք շրջաններ, ուր հայերն ազգաբնակչութիւն մնացած ամբողջ մասին թուրքերին՝ կոտորեցին,—որինակ՝ Ջանգեզուրը: Կա այնպիսի շրջան, ուր մեծամասնութիւն են հայերը, այնտեղ ել նրանք կոտորեցին բոլոր թուրքերին: Կարող եմ հիշատակել ուրիշ պրովինցիա—Նախիջևանը: Այնտեղ թուրքերը գերակշռում էին և նրանք կոտորեցին բոլոր հայերին: Այս կատարվեց Հայաստանի և Վրաստանի՝ իմպերիալիզմի լծից ազատվելու հենց նախորդակին:


(Չայն տեղից.— «Իրենց ձեռով են լուծել ազգային հարցը»):

Այս ել, իհարկե, ազգային հարցի լուծման վորոշ ձևն է: Բայց լուծման խորհրդային ձև չե այս: Ազգային փոխադարձ թշնամանքի այս մթնոլորտում ուսաներն, իհարկե, գործ չունեն, քանի վոր կովում են թուրքերն ու հայերը՝ առանց ուսաների: Ահա թե ինչու Անդրկովկասում անհրաժեշտ է մի հատուկ որգան, վորը կարողանա կանոնավորել ազգութիւնների փոխհարաբերութիւնները: Կարելի յե համարձակ ասել, վոր նախկին միապետական Ռուսաստանի պրոլետարիատի և մնացած բոլոր ազգութիւնների աշխատավորութիւն փոխհարաբերութիւնները կազմում են ամբողջ ազգային հարցի յերեք քառորդը: Սակայն այդ հարցի մի քառորդը պետք է բաժին թողնել անցյալում ձնշված ազգութիւնների փոխադարձ հարաբերութիւններին:

Յեզ անա փոխադարձ անվասանութիւն այս մթնոլորտում, յեթե Խորհրդային իշխանութիւնը չկարողանար Անդրկովկասում հիմնել ազգային խաղաղութիւն որգան, վորը կարողանար հարթել ընդհարումներն ու կոնֆլիկտները, մենք վերադարձած կլինեինք ցարիզմի կամ դաշնակիների, մուսաֆաթիստների, մենշելվիկների դարաշրջանին, յերբ մարդիկ այրում ու մորթում էին միմյանց: Ահա թե ինչու Կենտկոմը յերիցս հաստատեց Անդրկովկասյան ֆեդերացիայի պահպանման անհրաժեշտութիւնը, վորպես ազգային խաղաղութիւն որգանի:

Այստեղ կար և մնում է վրացի կոմունիստների մի խումբ, վորը չի առարկում, վոր Վրաստանը մտնի Հանրապետութիւնների Միութեան մեջ, բայց առարկում է, վոր այդ միավորումն անցնի Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով: Նրանք իբրև թե ուզում են ավելի մոտ լինել Միութեանը, իբր թե պետք չե այդ պատենը մեր՝ վրացիներին և Հանրապետութիւնների Միութեան միջև: Անդրկովկասյան ֆեդերացիայի կերպարանքով, իբր հարկավոր չե ֆեդերացիա: Այս կարծես թե հնչում է շատ հեղափոխականորեն: Բայց այստեղ ուրիշ միտք է թաղնված: Նախ՝ այդ հայտարարութիւնները վկայում են, վոր Վրաստանում ազգային հարցի ընագավառում վերաբերմունքը դեպի ուսաները յերկրորդական նշանակութիւն ունի, վորովհետև այդ ուկլոնիստները (նրանց այդպես են կոչում) վոչինչ դեմ չունեն, վոր Վրաստանն ուղղակի կապի Միութեան հետ, այսինքն՝ չեն վախենում վելիկոռուսական շովինիզմից, ընդունելով, վոր այդ, այսպես թե այնպես, տապալված է և կամ վճռական նշանակութիւն չունի: Նրանք, պարզ է, ավելի շատ են վախենում Անդրկովկասյան ֆեդերացիայից: Ինչո՞ւ: Ինչո՞ւ Անդրկովկասում ապրող յերեք ժողովուրդները, վորոնք այսքան ժամանակ կովում էին միմյանց դեմ, մորթում էին իրար, պատերազմում իրար դեմ,— ինչո՞ւ այդ ժողովուրդներն այժմ, յերբ, վերջապես, Խորհրդային իշխանութիւնը յեղբայրական միութեան կապեր է հաստատել դրանց միջև, ինչպես ֆեդերացիան է, յերբ այդ ֆեդերացիան տվել է փոխադարձ յեղբայրութեան իսկական պտուղներ, ինչո՞ւ այժմ պետք է կտրել ֆեդերացիայի այդ կապերը: Բանն ինչո՞ւնն է, ընկերներ: Բանը նրանումն է, վոր Անդրկովկասի ֆեդերացիայի կապերը Վրաստանին զրկում են այն արտոնյալ դրութիւնից, վոր նա կարող եր ունենալ իր աշխարհագրական դիրքի շնորհիվ: Ինչո՞ւնեղ դատեցեք: Վրաստանն ունի իր նավահանգիստը— Բաթումը, վորտեղից մուծվում են ապրանքներ Արևմուտքից, Վրաստանն ունի յերկաթուղային այնպիսի հանգույց, ինչպիսին Թիֆլիսն է, վորն անհրաժեշտ է հայերին, վորն անհրաժեշտ է իր ապրանքը Բաթումից ստացող Ադրբեջանին: Յեթե Վրաստանն առանձին հանրապետութիւն լիներ, յեթե նա չմտներ Անդրկովկասյան ֆեդերացիայի մեջ, նա կարող եր վորոշ փոքրիկ ուլտիմատում դնել և՛ Հայաստանին, վորն առանց Թիֆլիսի չի կարող յուր գնալ, և՛ Ադրբեջանին, վորն առանց Բաթումի չի կարող

1904



յուրա գնար: Այդ դեպքում վորոշ ոգուտներ կլինեյին: Պատահա-
կանությունն չէ այս, ընկերներ, վոր կորդոնի վերաբերյալ վայ-
րենի դեկրետը մշակվում է հատկապես Վրաստանում: Այժմ այդ
մեղքը բարդում են Սերբերըյակովի վրա: Դիցուք: Բայց չէ՞ վոր
նա Վրաստանում է ծնվել և վոչ թե Ադրբեջանում ու վոչ ել
Հայաստանում: Պատահականությունն չէ այս, վոր այդպիսի դեկ-
րետ է յեղել, վորով կամենում էյին կանոնավորել ազգաբնակ-
չության հարաբերությունները՝ վորպեսզի մի բան վերապահեն
հոգուտ Վրաստանի և Վրաստանին հնարավորություն տան ոգ-
տագործելու աշխարհագրական այն ձեռնտու դիրքը, վոր նա ան-
պայման ունի և վորը նա, հանձին ուկրոնիստների, կորցնել չի
ցանկանում: Այնուհետև այստեղ կա նաև ուրիշ պատճառ: Թիֆ-
լիսը Վրաստանի մայրաքաղաքն է, բայց նրանում վրացիները
25 տոկոսից ավելի չեն, իսկ հայերը 35 տոկոսից պակաս չեն.
մնացածը—ուրիշ ազգություններ են: Ահա ձեզ Վրաստանի մայ-
րաքաղաք: Իսկ յեթե Վրաստանը հանդիսանար առանձին հան-
րապետություն, ապա այստեղ կարելի չեր ազգաբնակչության
վորոշ տեղափոխություն կատարել, որինակ՝ հայ ազգաբնակչու-
թյանը Թիֆլիսից հեռացնել: Չէ՞ վոր յեղել է այդպիսի դեկրետ,
վորի մասին ընկ. Մախարաձեն հայտարարեց, վոր այդ ուղղված
եր հայերի դեմ: Կարելի չեր վորոշ տեղափոխություն կատարել
այնպես, վոր Թիֆլիսում հայերը տարեց-տարի ավելի քիչ լինե-
յին, քան վրացիները, և այդպիսով Թիֆլիսը դարձնել իսկական
վրացական մայրաքաղաք: Յես կարծում եմ, վոր գաղթեցնելու
վերաբերյալ դեկրետը նրանք հետ են վերցրել: Բայց նրանք ու-
նեն շատ հնարավորություններ, շատ այդպիսի ձևեր և ձևեր,
որինակ՝ «պարպում», վորի ոգնությամբ կարելի կլինի, պահպա-
նելով ինտերնացիոնալիզմի արտաքին տեսքը, բանն այնպես
սարքել, վոր Թիֆլիսում հայեր քիչ լինեն: Ահա այն ոգուտներն
աշխարհագրական տեսակետից, վոր ուկրոնիստները կորցնել չեն
ցանկանում, ահա Վրաստանի աննպաստ դրությունը՝ հենց Թիֆ-
լիսի մեջ, ուր վրացիներ ավելի քիչ կան, քան հայեր, վոր մեր ուկ-
րոնիստներին ստիպում են պայքարել Ֆեդերացիայի դեմ: Մենչևիկ-
ները հայերին և թուրքերին ուղղակի արտաքսում էյին Թիֆլի-
սից: Բայց այժմ, խորհրդային կարգերում արտաքսել չի կարելի,
ուստի և հարկավոր է չմտնել ֆեդերացիայի մեջ, և այն ժամա-
նակ իրավաբանական հնարավորություններ կլինեն ինքնուրույն

կերպով կատարելու նման վորոշ ոպերացիաներ, վորոնք կունե-
նան այն հետևանքը, վոր վրացիների նպաստավոր դրությունը
լիովին ոգտագործված կլինի հանդեպ Ադրբեջանի և Հայաստանի:

Այս բոլորի հետևանքով Անդրկովկասի վրացիների համար ար-
տոնյալ դրություն կստեղծվեր: Մրանումն է ամբողջ վտանգը:
Կարո՞ղ ենք արդյոք, անտես առնելով ազգային խաղաղությունն
Անդրկովկասում, կարո՞ղ ենք արդյոք ստեղծել այնպիսի պայ-
մաններ, վոր վրացիները Հայաստանի և Ադրբեջանի հանրապե-
տությունների նկատմամբ դանվեյին արտոնյալ վիճակում: Վնչ,
մենք այդ թույլ տալ չենք կարող:

Գոյություն ունի կառավարման մի հատուկ, հին սիստեմ,
յերբ բուրժուական իշխանությունն իրեն մոտեցնում է միքանի
ազգություններ, նրանց տալիս է արտոնություններ, իսկ մնա-
ցած ազգություններին նվաստացնում է, չցանկանալով նրանց
հետ քարշ գալ: Այսպիսով, մեկ ազգությունն առաջ քաշելով, նա
նրա միջոցով ճնշում է մյուս ազգություններին: Այսպես են կա-
ռավարել, որինակ, Ավստրիայում: Ամենքը հիշում են ավստրիա-
կան մինիստր Բեյստի հայտարարությունը, յերբ նա կանչեց
հունգարական մինիստրին և ասաց. «Իու քո հորդաները կառա-
վարիք, իսկ յես իմ հորդաների հախից կգամ»,— այսինքն՝ դու,
վորքան կարող ես, նեղիք ու ճնշիք քո ազգություններին Հուն-
գարիայում, իսկ յես կճնշեմ իմ ազգություններին: Իու և յես —
արտոնյալ ազգեր ենք, իսկ մյուսներին ճնշիր: Նույնը կատար-
վեց նաև լեհերի հետ հենց Ավստրիայի ներսում: Ավստրիացի-
ներն առաջ էյին քաշում լեհերին, նրանց արտոնություններ էյին
տալիս, վորպեսզի լեհերն ավստրիացիներին ոգնեն ամբապնդելու
նրանց դիրքերը Լեհաստանում, և դրա փոխարեն լեհերին հնա-
րավորություն տվին խեղդելու Գալիցիային: Այս հատուկ, զուտ
ավստրիական սիստեմ է՝ առաջ քաշել միքանի ազգությունների
և նրանց արտոնություններ տալ, վորպեսզի այնուհետև մնացած
ազգությունների հախիցը դան: Բյուրոկրատիայի տեսակետից՝
այս — կառավարման խնայողական ձև է, վորովհետև այս դեպ-
քում գործ էս ունենում մեկ ազգության հետ, բայց քաղաքա-
կան տեսակետից՝ հավաստի մահ է այս, քանի վոր ազգություն-
ների հավասարության սկզբունքները խախտել և վորև ազգու-
թյան համար արտոնություններ թույլ տալ, այդ նշանակում է
մահվան դատապարտել իր ազգային քաղաքականությունը:

Ճիշտ նույն կերպ է ներկայումս կառավարում Անգլիան Հընդ-կաստանին: Վերպեսզի բյուրոկրատիայի տեսակետից ավելի դյուրեքն լինի Հնդկաստանի ազգութունների ու ցեղերի հախիցը գալ, Անգլիան Հնդկաստանը բաժանել է՝ Բրիտանական Հընդ-կաստանի (240,000,000 բնակչութուն) և բուն Հնդկաստանի (72,000,000): Իհնչ հիման վրա: Այն հիման վրա, վոր Անգլիան ցանկացել է մի խումբ ազգութունների առաջ քաշել և նրանց տալ արտոնութուններ, վորպեսզի դրանով ավելի հարմար կերպով կառավարի մյուս ազգութուններին: Միայն Հնդկաստանում կա 800-ից վոչ պակաս ազգութուն, և Անգլիան վճռել է փոխանակ 800 առանձին ազգութունների հետ զործ ունենալ, ավելի լավ է ընտրել և առաջ քաշել միքանի ազգութուններ, նրանց տալ միքանի արտոնութուններ և նրանց միջոցով կառավարել մնացածներին, վորովհետև, նախ՝ վերջին ազգութունների անբավականութունն այդ դեպքում ուղղված կլինի արտոնյալ ազգութունների դեմ և վոչ թե Անգլիայի, իսկ յերկրորդ՝ ավելի եժան կնատի «քարշ գալ» յերկու-յերեք ազգութունների հետ, քան 800-ի:

Այդ էլ կառավարելու սխտեմ է,— անգլիական սխտեմ: Ո՞ւր է տանում այս: Ապարատի եժանացման, ճիշտ է: Սակայն, ընկերներ, յիթե չհաշվենք բյուրոկրատական հարմարութունները, ա՞նա այստեղ մահ է սպասում անգլիական տիրապետությանը Հնդկաստանում, այս սխտեմի հետևանքով կառավարման — ինչպես յերկու անգամ յերկու՝ չորս — անգլիական ամբողջ սխտեմն ու անգլիական տիրապետութունը հավաստի կործանման են դատապարտված:

Մեզ դեպի այդ վտանգավոր ուղին են դրո՞ւմ մեր վրացի ընկեր-ուկրոնիստները, քանի վոր նրանք պայքար են մղում ֆեդերացիայի դեմ՝ խախտելով կուսակցության բոլոր որենքները, քանի վոր նրանք ցանկանում են դուրս գալ ֆեդերացիայից, վորպեսզի պահպանեն նպաստավոր դիրքը: Նրանք մեղնից պահանջում են միքանի արտոնութուններ՝ ի հաշիվ Հայաստանի և Ազրբեջանի հանրապետութունների: Մենք այդ ուղիով գնալ չենք կարող, վորովհետև այդ հավաստի մահ է մեր ամբողջ քաղաքականությանը և Խորհրդային իշխանությանը Կովկասում:

Պատահականութուն չէ, վոր այդ վտանգն զգացել են մեր ընկերները Վրաստանում: Վրացական այդ շովինիզմը, վոր անցել է հայերի և ազրբեջանցիների դեմ ուղղված հարձակման,

վրդովեցրեց Վրաստանի կոմկուսակցությանը: Պատահականութուն չէ, վոր Վրաստանի կոմկուսակցութունը, վորն իր լեզալ գոյության որից յերկու համագումար է ունեցել, ամեն անգամ միահամուռ կերպով մերժել է ուկրոնիստ ընկերների պոզիցիան, վորովհետև առանց Անդրկովկասյան ֆեդերացիայի Կովկասում խաղաղութուն պահպանել չի կարելի, հավասարութուն հաստատել չի կարելի: Չի կարելի թույլ տալ, վոր մի ազգութուն լինի, իսկ մյուսը — վոչ: Այդ զգացին մեր ընկերները: Ահա թե ինչու յերկու տարվա պայքարի ընթացքում Մդիվանիի կողմնակիցները ներկայացնում են մի փոքրիկ խմբակ, վորը տապալկեց կուսակցության կողմից հենց Վրաստանում:

Նույնպես պատահական չէ, վոր ընկ. Լենինն այնպես շտապում եր և պնդում, վոր ֆեդերացիան կիրառվի անհապաղ: Պատահական չէ և այն, վոր մեր Կենտկոմը յերիցս հաստատեց ֆեդերացիայի անհրաժեշտութունը Անդրկովկասում, վոր ունի իր ԿԳԿ և իր գործադիր իշխանութունը, վորի վորոշումները պարտադիր են հանրապետութունների համար: Պատահական չէ այն, վոր յերկու հանձնաժողովներն էլ — թե ընկ. Չերժինսկու, թե ընկ. Կամենսկի (Կուլբիշևիի հետ) — գալով Մոսկվա, ասացին, վոր առանց ֆեդերացիայի յոլա գնալ չի կարելի:

Վերջապես պատահական չէ և այն, վոր «Социалистический Вестник»-ի մենշևիկները գովարանում են մեր ուկրոնիստ-ընկերներին՝ ֆեդերացիայի դեմ պայքարելու համար, ձեռքերի վրա յեն բարձրացնում նրանց նման գնմանն սիրի:

Անցնում եմ, ընկերներ, այն միջոցների, այն ուղիների քըննության, վորոնց ոգնությամբ մենք պետք է հաղթահարենք այս յերեք հիմնական ֆակտորները, վորոնք արգելակում են միավորումը՝ վերիկոռուսական շովինիզմը, փաստական անհավասարութունը և տեղական նացիոնալիզմը, մանավանդ այն դեպքում, յերբ նա դառնում է շովինիզմ: Այս ամբողջ ժառանգությանը, ժողովուրդների մերձեցումը դժվարացնող այս հին ժառանգությանը անցավազինորեն վերջ տալու միջոցներից յես կնշեմ միայն յերեքը:

Առաջին միջոցը. ձեռք առնել ամեն միջոց, վորպեսզի խորհրդային իշխանութունը հանրապետութունների մեջ դառնա հասկանալի և հարազատ, վորպեսզի խորհրդային իշխանութունը մեզ մոտ լինի վոչ միայն ուսուսական, այլև ազգամիջյան: Դրա

համար անհրաժեշտ է, վոր վոչ միայն դպրոցները, այլև բոլոր հիմնարկները, բոլոր որգանները — թե՛ իշխանության և թե՛ խորհրդադային — քայլ առ քայլ ազգայնացվեն, նրանք գործեն մասսաներին հասկանալի լեզվով, նրանք գործեն տվյալ ժողովրդի կենցաղի համապատասխան պայմաններում: Միայն այս դեպքում մենք հնարավորութուն կունենանք խորհրդային իշխանությունը ուսուսականից դարձնել ազգամիջյան իշխանություն, մերձավոր, հասկանալի և հարազատ բոլոր հանրապետությունների աշխատավոր մասսաների համար, մանավանդ նրանց համար, ովքեր տնտեսական և կուլտուրական տեսակետից հետ են մնացել:

Յերկրորդ միջոցը, վոր կարող եր դուրացնել մեր գործը՝ ցարիզմից և բուրժուազիայից մեզ մնացած ժառանգությունը վերացնելու, այդ — Հանրապետությունների Միության մեջ կոմիսարիատների այնպիսի կոնստրուկցիան է, վորը հնարավորութուն տար գոնե գլխավոր ազգություններին կոլեգիաների մեջ ունենալու իրենց մարդկանց և վորն ստեղծեր այնպիսի դրություն, վոր առանձին հանրապետությունների կարիքներն ու պահանջներն անպայման բավարարվեյին:

Յերրորդ միջոցը. անհրաժեշտ է, վոր մեր բարձրագույն որգանների կազմում լինի այնպիսի որգան, վորն անդրադարձներ, առանց բացառության, բոլոր հանրապետությունների ու ազգությունների կարիքներն ու պահանջները: Յես ցանկանում եմ ձեր ուշադրությունը գրավել հատկապես այս վերջինի վրա:

Յեթե մենք կարողանայիք Միութենական ԿԳԿ կազմի մեջ հաստատել յերկու պարտ, վորոնցից մեկն ընտրվեր Խորհուրդների Միութենական համագումարում, ազգություններից անկախ, իսկ մյուսն ընտրվեր հանրապետությունների և մարզերի կողմից (հանրապետությունները՝ հավասարաչափ, ազգային մարզերը՝ նույնպես հավասարաչափ) և հաստատվեյին նույն այդ Հանրապետությունների Միության խորհուրդների համագումարի կողմից, — յես կարծում եմ, վոր մենք այն ժամանակ մեր բարձրագույն հիմնարկների կազմի մեջ կունենայինք, առանց բացառության, բոլոր պրոլետարական խմբերի վոչ միայն դասակարգային շահերի, այլև զուտ ազգային պահանջների անդրադարձումը: Մենք կունենայինք մի որգան, վորը կանդրադարձներ Հանրապետությունների Միության տերիտորիայի վրա ապրող ազգությունների, ժողովուրդների և ցեղերի առանձնահա-

տուկ պահանջները: Չի կարելի, ընկերներ, մեր պայմաններում, յերբ Միությունն ընդհանուր առմամբ ընդգրկում է 140 միլիոնից վոչ պակաս մարդ, վորոնցից 65 միլիոնը վոչ-ուսաներ են, — այդպիսի պետության մեջ չի կարելի կառավարել՝ մոտոք, Մոսկվայում, բարձրագույն որգանում չունենալով այդ ազգությունների ներկայացուցիչներին, վորոնք անդրադարձնեյին վոչ միայն ամբողջ պրոլետարիատի ընդհանուր շահերը, այլև ազգային առանձնահատուկ, սպեցիֆիկ շահերը:

Առանց դրան, ընկերներ, կառավարել չի կարելի: Մեր ձեռքում չունենալով այդ բարոմետրը, չունենալով այն մարդկանց, վորոնք ընդունակ են ձևակերպելու առանձին ազգությունների այդ հատուկ կարիքները, — կառավարել չի կարելի:

Յերկիրը կառավարելու յերկու ձև կա. — մի ձևն այն է, յերբ ապարատը պարզեցրած է, և վերևում բազմած է, ասենք, մի խումբ կամ մեկ մարդ, վորը տեղերում ունի ձեռքեր ու աչքեր՝ հանձին նահանգապետների: Կառավարելու շատ հասարակ ձև է այդ, ընդվորում յերկրի գլուխը յերկիրը կառավարելով, ստանում է այն տեղեկությունները, վոր կարելի յե ստանալ նահանգապետներից, և գլուխը իրեն մխիթարում է այն հույսով, վոր ինքը ազնիվ և ուղիղ է կառավարում: Այնուհետև ծագում են բաղխուսներ, բաղխուսները դառնում են կոնֆլիկտներ, կոնֆլիկտները՝ ապստամբություններ: Այնուհետև ապստամբությունները ճնշվում են: Կառավարման այդպիսի սխտեմը մեր սխտեմը չէ, առ այդ՝ չափազանց թանգ է, թեև պարզ է: Մենք խորհրդային տարածքում պետք է ընդունենք կառավարման այնպիսի սխտեմ, վորը հնարավորութուն տա ճշտորեն նախադուշակելու բոլոր փոփոխությունները, բոլոր հանգամանքները թե՛ գյուղացիների մեջ, թե՛ ազգությունների մեջ, թե՛ այսպես ասած՝ այլազգիների մեջ, թե՛ ուսանների մեջ, վորպեսզի մեր բարձրագույն որգաններին սխտեմում լինեն մի շարք բարոմետրներ, վորոնք գուշակեն ամեն մի փոփոխություն, հաշվի առնեն ու կանխեն թե՛ բասմայական փոփոխություն, հաշվի առնեն ու կանխեն թե՛ բասմայական շարժումը, թե՛ բանդիտական շարժումը, թե՛ Կրոնշտադտը և թե՛ ամեն տեսակի հնարավոր փոփոխիկ ու ձախորդություն: Կառավարման խորհրդային սխտեմ է այս: Մրա համար է, վորնա կոչվում է խորհրդային իշխանություն, ժողովրդական իշխանություն, վոր հենվելով ստորին խավերի վրա՝ ամենից շուտ է ըմբռնում ամեն մի փոփոխություն, ձեռք է առնում համապա-

տասխան միջոցներ և ժամանակին և շտկում գիծը, յեթե այն ծոված է,—ինքն իրեն քննադատում և և գիծը շտկում: Կառավարման այդ սխտեմը խորհրդային սխտեմ է, և այդ պահանջում է, վոր մեզ մոտ բարձրագույն որգանների սխտեմում լինեն այնպիսի որգաններ, վորոնք անդրադարձնեն ազգային կարիքներն ու պահանջները լիովին:

Առարկութուն կա, թե այդ չբարդացնի կառավարման ամբողջ սխտեմը, վոր այդ նոր որգաններ կավելացնի: Այդ ճիշտ է: Մինչև այժմ մենք ունեյինք ՌՍՖՍՀ ԿԳԿ, հետո ստեղծեցինք Միության ԿԳԿ, այժմ Միության ԿԳԿ-ն, ինչպես յերևում է, ստիպված ենք բաժանելու յերկու մասի: Ուրիշ յեւք չկա: Յես նշեցի, վոր կառավարման ամենապարզ ձևն է՝ մի մարդ կարգել և նրան տալ նահանգապետներ, բայց Հոկտեմբերից հետո այդպիսի եքսպերիմենտներով դրադվել չի կարելի: Միտեմը բարդացել է, բայց այդ դյուրացնում է կառավարելը և ամբողջ կառավարումը դարձնում է խսկական խորհրդային: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր համագումարը պետք է վորոշում կայացնի հիմնելու մի հատուկ որգան—յերկրորդ պալատ՝ Միության ԿԳԿ կազմի մեջ, վորպես միանգամայն անհրաժեշտ որգան:

Յես չեմ ասի, վոր Միության ժողովուրդների միջև աշխատակցութունը կանոնավորելու կատարյալ ձևն է այդ, չեմ ասի, վոր գիտության վերջին խոսքն է այդ. բնավ յերբեք: Ազգային հարցը մենք կրկին կքննենք և բազմիցս, վորովհետև ազգային է միջազգային պայմանները փոխվում են և ելի կարող են փոխվել: Յես նույնիսկ ընդունում եմ, վոր կարող է պատահել մենք ստիպված լինենք միքանի կոմիսարիատներ, վոր մենք ձուլում ենք Հանրապետութունների Միության կազմի մեջ, հետո անջատել, յեթե փորձը ցույց կտա, վոր միքանի կոմիսարիատներ ձուլվելով՝ բացասական արդյունք են տվել:

Բայց մի բան պարզ է, վոր ամյալ պայմաններում և ամյալ հանգամանքներում ավելի լավ մեթոդ և ուրիշ՝ ավելի համապատասխան որգան մեր տրամադրության տակ չկա: Ավելի լավ միջոց և ուրիշ ճանապարհ՝ այնպիսի որգան ստեղծելու համար, վոր կարող լինի անդրադարձնել առանձին հանրապետութունների ներսում տեղի ունեցող բոլոր տատանումները և բոլոր փոփոխությունները,—մենք առայժմ չունենք, քան յերկրորդ պալատ հիմնելը: Ինքնին հասկանալի յե, վոր յերկրորդ պալատում

պետք է ներկայացվեն վոչ միայն այդ չորս հանրապետութունները, վորոնք միավորվել են, այլև բոլոր ժողովուրդները, վորովհետև խոսքը վոչ միայն ձևականորեն միավորված (թվով չորս) հանրապետութունների մասին է, այլև բոլոր ժողովուրդներին ու ազգություններին մասին: Ուստի և մենք պետք է ընտրենք այնպիսի ձև, վորն անդրադարձնել առանց բացառության բոլոր ազգություններին և հանրապետություններին պահանջները:

Յես յերափակում եմ, ընկերներ: Ուրեմն՝ ազգային հարցի կարևորութունը վորոշվում է միջազգային դրության նոր ստուգիտյով, նրանով, վոր մենք պետք է այստեղ՝ Ռուսաստանում, մեր ֆեդերացիայում ազգային հարցը լուծենք ուղիղ, ուրիշնակելի, վորպեսզի որինակ տանք Արևելքին, վորը մեր հեղափոխության ծանր ակերբներն են, և դրանով ուժեղացնենք նրանց փտահությունը, նրանց ձգտումը դեպի մեր ֆեդերացիան: Ներքին դրության տեսակետից նեպի պայմանները, վերիկոտական շովինիզմը և տեղական շովինիզմը նույնպես մեզ պարտադրում են ընդգծել ազգային հարցի կարևորությունը:

Յես այնուհետև ասացի, վոր ազգային հարցի էությունը, այդ ուղիղ հարաբերությունների սահմանում և նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և նախկին վոչ-գերիշխող ազգերի դյուրացիության միջև, և վոր այդ տեսակետից, ազգային հարցի կոնկրետ ձևը ամյալ մոմենտում արտահայտվում է նրանով, վոր ուղիներ գտնենք, միջոցներ գտնենք կանոնավորելու ժողովուրդների աշխատակցութունն ու համակցությունը Հանրապետություններին Միության մեջ, միասնական պետության մեջ:

Յես խոսեցի նաև այն ֆակտորներին մասին, վորոնք նպաստում են ժողովուրդների այդպիսի մերձեցմանը. յես խոսեցի այն ֆակտորներին մասին, վորոնք դժվարացնում են այդպիսի միավորումը: Յես հատուկ կանգ առա վերիկոտական շովինիզմի վրա, վորպես ամբացող ուժի: Այդ ուժը հիմնական վտանգ է, վոր կարող է խախտել անցյալում ձևված ժողովուրդների վրատահությունը դեպի ոռոսական պրոլետարիատը: Այդ մեր ամենափոփոխող վոր թշնամին է, վորին պետք է տապալենք, վորովհետև յեթե մենք այդ տապալենք, ապա Պետով կտապալենք և այն նացիոնալիզմը, վոր պահպանվել է և վոր ծավալվում է առանձին հանրապետություններում:

Այնուհետև: Մենք կանգնած ենք այն վտանգի առջև, վոր

ձեղքվածք առաջանալ պրոլետարիատի զիկտատուերայի սխտեմունմ: Այս վտանգավոր ե, ընկերներ: Քաղաքականութեան մեջ չի կարելի չափազանցութեաններին մեջ ընկնել, ինչպես չի կարելի չանել այն, ինչ անհրաժեշտ է:

Պետք է հիշել, վոր բացի ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, գոյութեան ունի նաև բանվոր դասակարգի իրավունքը՝ ամբաստանելու իր իշխանութեանը, և այս վերջին իրավունքին յենթակա չե ինքնորոշման իրավունքը: Լինում են դեպքեր, յերբ ինքնորոշման իրավունքը հակասում է ուրիշ՝ բարձրագույն իրավունքի՝ իշխանութեանն իր ձեռքը վերցրած բանվոր դասակարգի իրավունքին՝ ամբաստանելու իր իշխանութեանը: Այդպիսի դեպքերում, — այդ պետք է ուղղակի ասել, — ինքնորոշման իրավունքը չի կարող և չպետք է արդելք հանդիսանա բանվոր դասակարգի իրավունքին՝ իրականացնելու իր զիկտատուերան: Առաջինը պետք է նահանջի յերկրորդի հանդեպ: Այդպես էր, որինսակ՝ 1920 թվին, յերբ մենք ստիպված ելինք հողուտ բանվոր դասակարգի իշխանութեան պաշտպանութեան Վարչապետի վրա գնալ:

Ուստի չպետք է մոռանալ, վոր ազգութեաններին խոստումներ շտայելով, ազգութեանների ներկայացուցիչներին առաջ ունեցողներն անելով, ինչպես այդ արեցին ներկա համազուգումում միքանի ընկերներ, չպետք է մոռանալ, վոր ազգային հարցի գործողութեան ասպարեզը և նրա՝ այսպես ասած՝ իրավասութեան սահմանները մեր արտաքին և ներքին պայմաններում սահմանափակվում են «բանվորական հարցի» գործողութեան ասպարեզում, մի հարց, վոր բոլոր հարցերից հիմնականն է:

Այստեղ շատ հենվեցին Վլադիմիր Իլյինի տողերի և հոգվածներին վրա: Յես չեյի ցանկանա մեջբերումներ անել իմ ուսուցիչ, ընկ. Լենինից, քանի վոր նա այստեղ չե, և յես վախենում եմ՝ մի գուցե սխալվեմ և վոչ պատեհ մեջբերում անեմ: Բայց և այնպես՝ յես ստիպված եմ հիշատակել վոչ մի առարկութեան չվերցնող, վոչ մի թյուրիմացութեան տեղիք չտվող յերկու տող, վոր պետք է ընկերները չտարակուսեն ազգային հարցի տեսակարար կռի մասին: Քննելով Մարքսի նամակն ազգային հարցի մասին, ընկ. Լենինը ինքնորոշման վերաբերյալ իր հոգվածում հանգում է այս յեզրակացութեան. — «բանվորական հարցի համեմատութեամբ ազգային հարցի ստորադաս դրութեանը Մարքսի համար կասկածից դուրս է»: Այս միայն յերկու տող է, բայց այս վճռում

և ամեն ինչ: Ահա այս պետք է իրենց ականջին ող անեն մեր միքանի ջանադիր ընկերները:

Յերկրորդ հարցը վելիկոուսական շովինիզմի և տեղական շովինիզմի մասին է: Այստեղ արտահայտվեցին ընկ. Ռակոսկին, և մանավանդ ընկ. Բուխարինը, վորն առաջարկեց դուրս գցել այն կետը, ուր խոսվում էր տեղական շովինիզմի վրասակարութեան մասին: Իբր թե կարելք չկա զբաղվել այնպիսի ձեռնարկ հետ, ինչպես տեղական շովինիզմն է, յերբ կա այնպիսի «Գողթ»՝ ինչպես վելիկոուսական շովինիզմն է: Ընդհանրապես ընկ. Բուխարինը զղջացող տրամադրութեան ունեւր: Այդ հասկանալի չե. — տարիներով նա մեղանչել է ազգութեանների հանդեպ՝ ժխտելով ինքնորոշման իրավունքը, — ժամանակ է վերջապես նաև զղջալու: Բայց, զլջալով, նա ընկավ մյուս ծայրահեղութեան մեջ: Զվարճալի չե, վոր ընկ. Բուխարինը կոչ է անում կուսակցութեանը հետևել իր որինակին և նույնպես զղջալ, թեև ամբողջ աշխարհը դիտի, վոր կուսակցութեանը այս հարցում զղջալու վոչինչ չունի, վորովհետև նա իր գոյութեան հենց սկզբից (1898 թ.) ընդունել է ինքնորոշման իրավունքը: Բանն այն է, վոր ընկ. Բուխարինը չի հասկացել ազգային հարցի ելութեանը: Յերբ ասում են, թե ազգային հարցում պետք է զխավոր տեղ տալ վելիկոուսական շովինիզմի դեմ պայքարելուն, դրանով ցանկանում են նշել կոմունիստի պարտականութեանը, դրանով ցանկանում են ասել, վոր ոուս կոմունիստը պարտավոր է ինքք պայքար մղել ոուս շովինիզմի դեմ: Յեթե վոչ-ուուս, այլ Թուրքեստանի կամ վրացի կոմունիստները ձեռնարկեյին պայքարելու ոուսական շովինիզմի դեմ, ապա դրանց այդ պայքարը կվորակեյին վորպես հակաուսական շովինիզմ: Այդ կիճճեր ամբողջ գործը և կամբաստանել վելիկոուսական շովինիզմը: Միայն ոուս կոմունիստները կարող են իրենց վրա վերցնել պայքարը վելիկոուսական շովինիզմի դեմ և այդ հասցնել մինչև վերջը:

Իսկ ի՞նչ են ուզում ասել, յերբ առաջարկում են պայքարել տեղական հակաուսական շովինիզմի դեմ: Իրանով ուզում են շեշտել տեղական կոմունիստների պարտականութեանը, վոչ-ուուս կոմունիստների պարտականութեանը՝ պայքարելու իրենց շովինիզմի դեմ: Միթե կարելի չե ժխտել, վոր թեքումներ դեպի հակաուսական շովինիզմը՝ կան: Հո ամբողջ համազուգումը պարզապես տեսավ, վոր տեղական, վրացական, բաշկիրական և այլ շո-

վինիզմ գոյութունն ունի և վոր դրա դեմ պետք է պայքարել։
Ռուս կոմունիստները չեն կարող պայքարել թաթարական, վրացական, բաշկիրական շովինիզմի դեմ, վորովհետև յեթե ուրեք կոմունիստն իր վրա վերցնի թաթարական կամ վրացական շովինիզմի դեմ պայքարելու ծանր խնդիրը, ապա դրա այդ պայքարը կվորակվի վորպես վելիկոռուսական շովինիզմի պայքար-թաթարների և վրացիների դեմ։ Այդ կիսճեղք ամբողջ գործը։ Միայն թաթար, վրացի և այլ կոմունիստները կարող են պայքարել թաթարական, վրացական և այլ շովինիզմի դեմ, միայն վրացական կոմունիստները կարող են հաջողութամբ պայքարել իրենց վրացական նացիոնալիզմի կամ շովինիզմի դեմ։ Վոչ-ուրեք կոմունիստների պարտականութունն է այդ։ Ահա թե ինչու անհրաժեշտ է թեղիսներում շեշտել ուրեք կոմունիստներին (յես նկատի ունեմ պայքարը վելիկոռուսական շովինիզմի դեմ) և վոչ-ուրեք կոմունիստներին (յես նկատի ունեմ պայքարը հակահայկական, հակաթաթարական, հակառուսական շովինիզմի դեմ) այդ յերկկողմանի խնդիրը։ Առանց դրա թեղիսները դուրս կզան միակողմանի, առանց դրա վոչ մի ինտերնացիոնալիզմ՝ վոչ պետական և վոչ ել կուսակցական շինարարության մեջ՝ չի կարելի ստեղծել։

Յեթե մենք պայքար մղենք վելիկոռուսական շովինիզմի դեմ, ապա այդ պայքարը կքողարկի թաթարական և այլ շովինիստների պայքարը, վորը տեղերում ծալվալով և և վորը վտանգավոր է մանավանդ այժմ՝ նեպի պայմաններում։ Մենք չենք կարող պայքար չմղել յերկու Ֆրոնտի վրա, վորովհետև միայն յերկու Ֆրոնտի վրա պայքարելու պայմանով (մի կողմից վելիկոռուսական շովինիզմի դեմ, վորը հիմնական վտանգ է հանդիսանում մեր շինարարական աշխատանքում, և մյուս կողմից տեղական շովինիզմի դեմ) կարելի կլինի հաջողութունն ունենալ, վորովհետև առանց այդ յերկկողմանի պայքարի վոչ մի գոյուցին չի լինի ուրեք և ոտար ազգութունների բանվորների ու գյուղացիների միջև։ Հակառակ դեպքում կարող է ստացվել տեղական շովինիզմի խրախուսանք, վորը մենք թույլ տալ չենք կարող։

Թույլ տվեք այստեղ ել միքանի տող հիշատակել ընկ. Լենինից։ Յես այդ չեյի անի, բայց վորովհետև մեր համազումարում կան շատ ընկերներ, վորոնք ընկ. Լենինից մեջբերումներ են անում ծուռ ու շիտակ, նրան աղավաղելով, թույլ տվեք

կարգալ միքանի խոսք ընկ. Լենինի՝ բոլորիդ հայտնի մի հոդվածից։

«Պրոլետարիատը պետք է պահանջի «իր» ազգի կողմից ճշնշվող գաղութների և ազգերի քաղաքական անջատում։ Հակառակ դեպքում պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը կմնա դատարկ հնչյուն։ Ճշնշվող և ճշնոյ ազգի բանվորների միջև հնարավոր չի լինի վոչ վստահութուն, վոչ ել դասակարգային համերաշխութուն»*)։

Այս, այսպես ասած, գերիշխող կամ նախկին գերիշխող ազգի պրոլետարների պարտականութունն է։ Այնուհետև նա խոսում է անցյալում ճշնված ազգութունների պրոլետարների կամ կոմունիստների պարտականության մասին։

«Մյուս կողմից, ճշնվող ազգության սոցիալիստներն առանձնապես պետք է պաշտպանեն և կյանքում կիրառեն ճշնված ազգության բանվորների լրիվ և անպայման—այդ թվում նաև կազմակերպական—միասնականութունը՝ ճշնոյ ազգի բանվորների հետ։ Առանց դրա հնարավոր չի պաշտպանել պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականութունը և նրա դասակարգային համերաշխութունը ուրիշ յերկրների պրոլետարիատի հետ՝ բուրժուազիայի բոլոր և ամեն տեսակի արարքների, դավաճանութունների և սրիկայութունների դեպքում, վորովհետև ճշնված ազգերի բուրժուազիան ազգային ազատագրության լողունները մշտապես դարձնում է բանվորներին խաբելու մի միջոց»**)։

Ինչպես տեսնում եք, յեթե զնանք ընկ. Լենինի հետքերով,— իսկ այստեղ ընկերներից վոմանք յերգվեցին նրա անունով,— ապա ուրեմն անհրաժեշտ է յերկու թեղիսներն ել, ինչպես վելիկոռուսական շովինիզմի, այնպես ել տեղական շովինիզմի դեմ պայքարելու մասին թողնել բանաձևում, իբրև մի յերևույթի յերկու կողմեր, ընդհանրապես շովինիզմի դեմ պայքարելու վերաբերյալ թեղիսներ։

Յես սրանով վերջացնում եմ իմ առարկութուններն այն հուետորների դեմ, վորոնք այստեղ արտահայտվեցին։

*) Լենին, Սոցիալիստական հեղափոխութունը և ազգերի ինքնորոշման իրավունքը, Յերկեր, հ. ՎՄ, էջ 41, 2-րդ և 3-րդ ուրեք. հրատ.։ Սմբ.։

**) Նույն տեղ։

Այնուհետև թույլ տվեք ինձ հաղորդելու ազգային հարցի սեկցիայի աշխատանքների մասին: Սեկցիան հիմք ընդունեց Կենտրոնի թեզիսները: Սեկցիան այդ թեզիսները վեց կետերը՝ 1, 2, 3, 4, 5 և 6—թողեց անփոփոխ: Սեկցիայում տեղի ունեցող պայքար և ամենից առաջ այն մասին, թե արդյոք նախապես հարկավոր է ավտոնոմ հանրապետություններն առանձնացնել ՌՍՖՍՀ կազմից, այլա առանձնացնել Կովկասի անկախ հանրապետությունները Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմից, վերապահի նրանք ինքնուրույն կերպով մտնեն, թե՞ հարկավոր չէ: Այս վրացի ընկերները մի մասի առաջարկն էր, վորը, ինչպես հայտնի չէ, վրացական, հայկական, ադրբեջանյան պատվիրակությունների կողմից համակրանքի չի հանդիպում: Սեկցիան քննարկեց այս հարցը և հսկայական մեծամասնությունը արտահայտվեց հողուտ այն բանի, վոր պահպանվի թեզիսներում գարգացված դրությունը, այսինքն՝ ՌՍՖՍՀ մնա իբրև ամբողջական մի կազմություն, Անդրկովկասյան ֆեդերացիան՝ նույնպես իբրև ամբողջական մի կազմություն և այս ձևով մտնի հանրապետությունների Միություն մեջ: Վրաց ընկերների մի մասի բոլոր առաջարկները, սակայն, չքվեարկվեցին, քանի վոր այդ առաջարկների հեղինակները, տեսնելով, վոր իրենց առաջարկները համակրանքի չեն արժանանում՝ հանեցին: Այս հարցի շուրջը տեղի ունեցավ լուրջ պայքար: Յերկրորդ հարցը, վորի շուրջը տեղի ունեցավ պայքար, այդ այն հարցն էր, թե ինչպես կազմավորել յերկրորդ պարտը: Ընկերների մի մասը (փոքրամասնությունը) առաջարկում էր վերին կամ յերկրորդ պարտի կազմի մեջ մտցնել վոչ թե բոլոր հանրապետությունների, ազգությունների ու մարզերի ներկայացուցիչներին, այլ ստեղծել չորս հանրապետությունների՝ ՌՍՖՍՀ, Անդրկովկասյան ֆեդերացիայի, Բելոռուսիայի և Ուկրաինայի ներկայացուցչություն հիմունքներով: Մեծամասնությունն այս առաջարկը չընդունեց, և սեկցիան արտահայտվեց այս առաջարկի դեմ, վճռելով, վոր ավելի նպատակահարմար կլինի յերկրորդ պարտը կազմել այնպես, վոր այնտեղ հավասարություն սկզբունքներով ներկայացվեն բոլոր հանրապետությունները (թե անկախ, թե ավտոնոմ) և բոլոր ազգային մարզերը: Յես շարժառիթները չպիտի արտահայտեմ այստեղ, քանի վոր փոքրամասնության ներկայացուցիչ ընկ. Ռակովսկին այստեղ հանդես է գալու իր առաջարկը հիմնավորելու

համար, վորը սեկցիայում չի անցել: Յերր նա արտահայտվի, յես նույնպես կարտահայտեմ իմ դիտողությունները: Նմանապես պայքար տեղի ունեցավ վոչ այնքան կատարի՝ այն հարցի շուրջը, թե արժե՞ արդյոք այս թեզիսների մեջ մտցնել այնպիսի ուղղում, վորը նշեր, վոր անհրաժեշտ է ազգային հարցը լուծելիս կողմնորոշվել վոչ միայն Արևելքով, այլև Արևմուտքով: Սեկցիան քվեարկեց այս ուղղումը: Սա փոքրամասնության ուղղումը: Յես այս հարցի առթիվ նույնպես կխոսեմ այն ժամանակ, յերբ արտահայտվի ընկ. Ռակովսկին: Յես կհարգամ այն ուղղումները, վորոնք մեզ մոտ անցել են: Վեց կետ մենք ընդունել ենք անվերապահորեն: 7-րդ կետում, յերկրորդ արգաց, յերրորդ տող՝ «Այս պատճառով վճռական պայքար» խոսքերից առաջ մտցնել հետևյալը.

«Մի շարք ազգային հանրապետություններում (Ուկրաինա, Բելոռուսիա, Ադրբեջան, Թուրքեստան) դրությունը բարդանում է նրանով, վոր խորհրդային իշխանություն հիմնական պատվանգանը հանդիսացող բանվոր դասակարգի նշանակելի մասը պատկանում է վելիկոուտս ազգին: Այս շրջաններում քաղաքի ու գյուղի, բանվոր դասակարգի և գյուղացիությունը գոգումը ամենախիստ խոչընդոտի յես հանդիպում վելիկոուտսական շովինիզմի մնացորդների մեջ ինչպես կուսակցական, նույնպես և խորհրդային օրգաններում: Այս պայմաններում ուսական կուլտուրայի առավելությունների վերաբերյալ խոսակցությունները և այն դրությունն առաջադրումը, թե ավելի բարձր ուսական կուլտուրայի հաղթանակն անխուսափելի յես ավելի հետամնաց ժողովուրդների (ուկրաինական, ադրբեջանյան, ուզբեկյան, կիրգիզյան և այլն) կուլտուրայի նկատմամբ՝ վոչ այլ ինչ են, բայց յեթե մի փորձ ամրապնդելու վելիկոուտս ազգի տիրապետությունը»:

Այս ուղղումը յես ընդունեցի, վորովհետև նա բարելավում է թեզիսները: Յերկրորդ ուղղումը նույնպես վերաբերում է 7-րդ կետին: «Առանց սրա հիմք չկա հուսալու» խոսքից առաջ մտցնել հետևյալ լրացումը.

«Այս ողնությունն առաջին հերթին պետք է արտահայտվի նրանով, վոր մի շարք գործնական միջոցներ ձեռք առնվեն առաջներում ճնշված ազգությունների հանրապետություններում

ստեղծելու արդյունաբերական ոլորտներ՝ առավելագուցն չսփոփ
ներգրավելով տեղական բնակչութիւնը: Վերջապես, այս ոգնու-
թյունը, X համագումարի բանաձևի համաձայն, պետք է ըն-
թանա աշխատավորական մասսաների պայքարին զուգընթաց՝
ընդգեմ նեպի հետեանքով ուժեղացող տեղական ու յեկվոր շա-
հագործիչ վերնախավերի, հանուն իրենց սոցիալական դիրքերի
ամրացման: Քանի վոր այս հանրապետութիւնները գերազան-
ցապէս գյուղատնտեսական շրջաններ են, սոցիալական ներքին
միջոցառումները պետք է ամենից առաջ ընթանան աշխատավո-
րական մասսաներին պետական ազատ հողային ֆոնդով բավա-
րարելու ուղղութիւնով:

Այնուհետև նույն 7-րդ կետով, յերկրորդ արդաց, մեջտե-
ղում, վորտեղ խոսվում է վրացական, աղբրեջանյան և այլ շո-
նիզմի մասին, մտցնել՝ «հայկական շովինիզմ և այլն»: Հայ ըն-
կերներն ուղեցին, վոր հայերը չվիրավորվեն, վոր իրենց շովինի-
զմի մասին նույնպէս հիշատակվի:

Այնուհետև թեղիսների 8-րդ կետով «միասնական անրաժանելի»
բառերից հետո մտցնել հետևյալը. «Հնի ժառանգութիւնն նույն-
պիսի արդյունք պիտի համարել ՌՄԾՆՀ միքանի գերատեսչու-
թյուններ ձգտումը՝ իրենց յենթարկելու ավտոնոմ հանրապե-
տութիւններ ինքնուրույն կոմիսարիատները և ճանապարհ
հարթելու նրանց վերացման համար»:

Այնուհետև 8-րդ կետի մեջ մտցնել հետևյալը. «և հոչակելով
ազգային հանրապետութիւնների գոյութիւնն ու հետագա զար-
գացման բացարձակ անհրաժեշտութիւնը»:

Այնուհետև 9-րդ կետ: Սկսել այնպէս, ինչպէս յես կկարգամ.
«Հանրապետութիւնների Միութիւնը, վոր ստեղծված է առան-
ձին հանրապետութիւնների բանվորների ու դժուրացիների հա-
վասարութիւնն ու կամավորութիւնն սկզբունքով, պրոլետարիատի
առաջին փորձն է հանդիսանում անկախ յերկրների միջազգային
փոխհարաբերութիւնների կարգավորման գործում և առաջին
քայլը դեպի ապագա Աշխատանքի համաշխարհային խորհրդային
հանրապետութիւնն ստեղծումը»:

10-րդ կետն ունի «ա» յենթակետ. մինչ այդ մտցրել ենք
«ա» յենթակետ հետևյալ ձևով.

«ա) Միութիւնն կենտրոնական որդանների կառուցման ժամա-
նակ ապահովվի առանձին հանրապետութիւնների իրավունքներ

ընդ ու պարտականութիւնների հավասարութիւնը ինչպէս
նրանց փոխադարձ հարաբերութիւններում, այնպէս էլ Միու-
թիւնն կենտրոնական իշխանութիւնն վերաբերմամբ»:

Այնուհետև կգա «բ» յենթակետն այն ձևով, ինչ ձևով յեղել
և «ա» յենթակետ անունով:

«բ) Միութիւնն բարձրագուցն որդանների սիստեմում հիմնվի
առանց բացառութիւնն բոլոր ազգային հանրապետութիւնների
և ազգային մարդերի ներկայացուցչութիւնն հատուկ որդան հա-
վասարութիւնն սկզբունքներով՝ այդ հանրապետութիւնների
կազմի մեջ մտնող բոլոր ազգութիւնների ներկայացուցչութիւնն
հնարավոր հաշվառումով»:

Այնուհետև նախկին «բ» յենթակետը, այժմ «գ» յենթակետ
այս ձևով.

«գ) Միութիւնն գործադիր մարմինները կառուցվեն այնպիսի
սկզբունքներով, վորոնք ապահովում են հանրապետութիւնների
ներկայացուցչների ղեկավարման մասնակցութիւնը նրանց մեջ և Միու-
թիւնն ժողովուրդների կարեւորների ու պահանջների բավարարումը»:

Ապա գալիս է «գ» յենթակետը, լրացումը.

«դ) հանրապետութիւններին տրամադրվեն բավական լայն
ֆինանսական ու մասնավորապէս բյուջետային իրավունքներ,
վորոնք ապահովեն նրանց սեփական պետական-ազգային տրա-
տիվ, կուլտուրական ու տնտեսական նախաձեռնութիւնն ցուցա-
բերման հնարավորութիւնը»:

Այնուհետև գալիս է «գ» յենթակետը, իբրև «յե» յենթակետ.

«յե) ազգային հանրապետութիւնների ու մարդերի որդան-
ները կառուցվեն գերազանցապէս տեղական մարդկանցից, վո-
րոնք գիտեն համապատասխան ժողովուրդների լեզուն, կենցա-
ղը, բարքերն ու սովորութիւնները»:

Այնուհետև ավելացված է յերկրորդ յենթակետը. Վերջինը
կլինի «զ».

«զ) հրատարակվեն հատուկ որդաններ, վորոնք ապահովեն
մայրենի լեզվի գործածութիւնը տեղական ու ազգային բնակ-
չութիւնն ու ազգային փոքրամասնութիւններին սպասարկող
բոլոր պետական որդաններում ու հաստատութիւններում,
որդաններ, վորոնք հետապնդեն և հեղափոխական ամբողջ դաժա-
նութիւնով պատժեն ազգային իրավունքների և առանձնապէս

ազգային փոքրամասնությունների իրավունքների բոլոր խախտողներին»:

Այնուհետև, իբրև լրացում, «ե» յենթակետը.

«ե) Կարմիր բանակում ուժեղացվի դաստիարակչական աշխատանքը Միության ժողովուրդների յեղբայրության ու համերաշխության գաղափարներն արմատացնելու իմաստով և գործնական միջոցառումներ ձեռնարկվեն կազմակերպելու ազգային գործասեր՝ պահպանելով այն բոլոր միջոցները, վոր անհրաժեշտ են հանրապետությունների լիակատար ինքնապաշտպանության համար»:

Ահա այն բոլոր լրացումները, վոր ընդունել է սեկցիան և վորոնց դեմ յես առարկություն չունեմ, վորովհետև դրանք ավելի կոնկրետացնում են թեղիսները: Ինչ վերաբերում է յերկրորդ հատվածին, ապա քիչ թե շատ լուրջ ուղղումներ չեն մտցված այս հատվածի մեջ: Յեղել են միքանի աննշան ուղղումներ, վորոնց ազգային հարցի սեկցիայի ընտրած հանձնաժողովը վորոշել է հանձնել ապագա Կենտկոմին: Այսպիսով, յերկրորդ հատվածը մնում է այն ձևով, ինչպես բաժանվել է սպազիբ նյութերում:

Ն ա խ ա գ ա հ ո զ .— Ուղղումներ մտցնելու համար խոսք ունի ընկ. Ռակովսկին:

Ռ ա կ ո վ ս կ ի .— Ընկերներ, յես մտցնում եմ սուսջին ուղղումը. թույլ տվեք պատճառաբանել այն: Ընկ. Ստալինն իր առաջին ձևում, վոչ-այսորիվ անտիթեզիսային, այլ իր առաջին ձևում, յերբ պատճառաբանում եր խիստ ուշադիր վերաբերմունքը դեպի ազգային հարցը, նշեց, վոր բացի ներքին կարգի հանգամանքներից, կան նաև արտաքին կարգի հանգամանքներ և, ի միջի այլոց, նշեց այն հսկայական նշանակութունը, վոր ազգային հարցը պետք է ունենա վերահաս հեղափոխության մեջ Արևելքի ժողովուրդների և արևմտյան իմպերիալիստական պետությունների անխուսափելի ընդհարման հետևանքով: Դրան պետք է ավելացնել մի աննշան մոմենտ, վորը նմանապես մեզ պարտավորեցնում է խորապես ուշադիր վերաբերմունք ունենալ ազգային հարցին մեզ մոտ ներսում. այս՝ ազգային շարժումն է, վոր գոյութուն ունի Արևմուտքում: Սակայն, դժբախտաբար, ընկ. Ստալինն իր թեղիսներում նույնիսկ չակնարկեց այդ: Այնտեղ վոչինչ չկա վոչ Արևելքի, վոչ էլ Արևմուտքի մասին: Յեվ այսոր

հանձնաժողովում, յերբ ընկ. Ստալինն ասում եր, թե յեթե մենք ուղղում մտցնենք Արևմուտքի վերաբերյալ, ապա կստացվի, վոր մենք մի քիչ թուլացնում ենք Արևելքի մոմենտը, կարծես թե այս մոմենտը յեղել է նրա թեղիսներում: Բայց այս մոմենտը չկա նրա թեղիսներում: Այսպիսով, ընկերներ, յես գտնում եմ, վոր նրա թեղիսներում, — այս կամ այն խմբազրուցյամբ, այս հարկավոր է թեղիսներում, — այս կամ այն խմբազրուցյամբ, այստեղ յես այդ մասին չեմ վիճում, այս կամ այն թեղիսի վերջում, այս Ստալինի կամ Կենտկոմի գործն է, — հիշատակվի այն, ինչ մենք վերջին ժամանակներս այնպես հաճախ լսել ենք թե Վլադիմիր Իլյիչից, թե այստեղ, վորպեսզի մենք մեր խորհրդային հանրապետությունների սահմաններից դուրս դառնանք ճնշված ազգությունների պայքարի կենտրոն, մենք պետք է ներսում, մեզ մոտ, մեր խորհրդային հանրապետությունների սահմաններում տանք ազգային հարցի ճիշտ լուծումը, վորովհետև յեթե մենք տանեղ, արտասահմանում խոսենք ազգային ինքնորոշման մասին, իսկ մեզ մոտ ներսում այդ չտանք, ապա, իհարկե, յուրասին, իսկ մեզ մոտ ներսում այդ չտանք, ապա, իհարկե, յուրաքանչյուր վոք մեզ կպախարակի կեղծավորության համար: Հիշեցնեմ Վլադիմիր Իլյիչի խոսքերը. «Մեզ թույլ չի տրված ամենափոքր իսկ սխալ անելու այս ասպարեզում, վորովհետև այդ սխալը, խախտելով մեր սկզբունքային անկեղծությունը, — այս նրա խոսքերն են, — կարող է խախտել նաև մեր պայքարն ի պաշտպանություն ճնշված ազգությունների ընդդեմ իմպերիալիզմի», ուստի յես առաջարկում եմ մտցնել հետևյալ թեղիսը: Այսոր հանձնաժողովում թեղիսը շատ մեծ եր, մենք այն վերցրինք մեր ուկրաինական թեղիսներից, բայց յես կրճատել եմ և առաջարկում եմ կրճատ ձևով:

«Այն հսկայական հեղափոխական նշանակությունը, վոր ձեռք է բերում Արևելքի ու գաղութների ժողովուրդների պայքարը և իմպերիալիստական պետությունների ճնշումից ազատագրելու համար, ինչպես և Յեվրոպայում՝ ոկուպացիայի յենթարկված տարրեր վայրերում բռնկած ազգային ճնշումներն էլ ավելի պարտականություն են դնում կուսակցության վրա՝ թեորիական ու գործնական ճիշտ լուծում տալու ազգային հարցին Սորհրդային Հանրապետությունների Միության սահմաններում:

Միմիայն յերկրի ներսում ազգային հարցում վարած մեր քաղաքականության ամենախիստ համաձայնեցումն այն քաղաքականության հետ, վոր մենք վարում ենք ազգային հարցում մեր

պետական կուսակցութեան քաղաքականութեան մեջ արտասահմանում՝ կարող եւ տալ Խորհրդային Հանրապետութեաններէ Միութեանն ու Կոմունիստական կուսակցութեանն այն զարմանալի հեղինակութեանն ու սկզբունքային անկեղծութեանը, վորոնք նրանցից կատեղծեն կատարյալ մեծութեամբ համաշխարհային պրոլետարիատի պայքարի հենարան ընդդէմ իմպերիալիզմի»:

Ն ա խ ա գ ա հ ո ղ . — Խոսք ունի ընկ. Ստալինը:

Ս տ ա լ ի ն . — Թեև ընկ. Ռակովսկին յեռապատիկ փոփոխել եւ քառապատիկ կրճատել եւ այն բանաձևը, վոր նա առաջարկել եւ սեկցիային, այնուամենայնիւ, յես վճռապես դեմ եմ նման ուզողման, և ահա թե ինչու: Ազգային հարցի վերաբերյալ մեր թեզիաները կառուցված են այնպես, վոր մենք կարծես մի տեսակ յերեսներս դարձնում ենք դեպի Արևելք, նկատի ունենալով այն ծանր ռեզերվները, վոր ննջում են այնտեղ: Ամբողջ ազգային հարցը մենք դրել ենք Իլլիչի հողվածի*) կապակցութեամբ, վորը կարծես թե վոչ մի խոսք չի ասում Արևմուտքի մասին, վորովհետև այնտեղ չե ազգային հարցի կենտրոնը, այլ Արևելքի գաղութներում ու կիսագաղութներում: Ընկ. Ռակովսկին ուզում եւ, վոր մենք դառնալով դեպի Արևելք, դրա հետ միասին դառնանք նաև դեպի Արևմուտք: Սակայն այս անկարելի յե, ընկերներ, և անբնական, վորովհետև մարդիկ իրենց յերեսը դարձնում են կամ մեկ կողմ, կամ մյուս կողմ, — միևնույն փամօնակ յերկու կողմն ել դառնալ անկարելի յե: Մենք չենք կարող և չպետք ե խախտենք թեզիաների ընդհանուր տոնը, նրանց արևելյան տոնը: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր ընկ. Ռակովսկու ուղղումը պետք ե մերժվի:

Ն ա խ ա գ ա հ ո ղ . — Ընկերներ, յես նախ կքվեարկեմ այն ուղղումները, վոր հանձնաժողովն ընդունել ե անվիճելիորեն, ապա այն ուղղումները, վոր մերժում ե ընկ. Ստալինը և առաջարկում ե ընկ. Ռակովսկին: Ո՞վ ե կողմնակից ընկ. Ստալինի մտցրած ուղղումներին: Բացահայտ մեծամասնութեան: Ո՞վ ե պաշտպանում ընկ. Ռակովսկու ուղղումը: Ո՞վ ե դեմ: Ուղղումը մերժվում ե: Ընկ. Ռակովսկին դարձյալ ուղղում ունի:

*) Ը են ի ն, Լ ա Վ ե ք ի չ, բ ա յ յ լ ա Վ (1923 թ.), Յ եր կ եր, հ. XXVII: Խ մ ք :

Ռ ա կ ո վ ս կ ի . — Ընկերներ, յերկրորդ ուղղումը շատ ավելի մեծ նշանակութեան ունի (թեև առաջին ուղղումը նույնպես մեծ նշանակութեան ունի): Յերկրորդ ուղղումը նշանակութեան ունի մեզ համար ներսում: Մենք գտնում ենք, — այս ասում եմ բոլոր ուկրաինական ընկերների անունից, — վոր այսօր սեկցիայում խոշոր սխալ կատարվեց, վորտեղ ընդունվեց ընկ. Ստալինի ձևակերպումը յերկպալատ սիստեմի մասին: Ամենից առաջ, ընկերներ, ամեն մի վեճ վերացնելու համար յես հայտարարում եմ, վոր մենք յերկպալատ սիստեմի ամենավճռական կողմնակիցներն ենք: Նշանակում ե՝ այս մասին չե խոսքը, այլ ինչ վոր ուրիշ բանի մասին: Ինչի՞ համար ե ստեղծվել յերկպալատ սիստեմը: Նրա համար, վոր այն յերաշխիքներ տա առանձին հանրապետութեաններին: Ահա յերկպալատ սիստեմի իմաստը: Այն վորոշման դեպքում, վոր ընդունվեց այսօր, յերկպալատ սիստեմը վոչ միայն վոչ մի յերաշխիք չի տալիս մեզ, առանձին հանրապետութեաններին, այլ ընդհակառակը՝ այն փաստորեն ել ավելի ամբապնդում ե այն սիստեմը, վոր մենք ունենք այժմ՝ մի սիստեմ, վորն արտահայտվում ե նրանով, վոր մեզ մոտ 360 պատգամավորից միութենական կրկ մեջ 280 հոգի, գուցե և ավելի, պատկանում են ՌՍՖՍՀ-ին: 80-ը պատկանում են բոլոր անկախ հանրապետութեաններին՝ միասին վերցրած... Ի՞նչ ընդունեց այսօր հանձնաժողովը: Նա ընդունեց հետևյալը, վոր այսպես կոչված յերկրորդ պալատում բոլոր ազգութեանները, — յես պես կոչված յերկրորդ պալատում այս խոսքի վրա, — ազգութեան ուշադրութեան եմ հրավիրում այս խոսքի վրա, — ազգութեանները կմասնակցեն հավասար թվով ձայներով: Այսպիսով, ՌՍՖՍՀ 15 ավտոնոմ հանրապետութեաններից ու մարզերից յուրաքանչյուրը կունենա 4-ական ձայն: Կենտրոնական շրջանը կունենա 4 ձայն, Ուկրաինան կունենա 4 ձայն, Անդրկովկասյան յերեք 4 ձայն, Բելոռուսիան նույնպես հանրապետութեանները՝ 4-ական ձայն, Բելոռուսիան նույնպես կունենա 4 ձայն: Իսկ ի՞նչ ե ստացվում: Ստացվում ե այն, վոր ՌՍՖՍՀ փաստորեն կունենա 64 կամ 70 ձայն, Ուկրաինան կունենա 4 ձայն, Բելոռուսիան կունենա 4 ձայն: Այն, ընկեր Ստալին, նրա մոտ չափազանց ձեռնտու դրութեան ե ստացվում, և նա ասում ե. «Յես ճանաչում եմ բոլոր ազգութեանները, իսկ դուք ահա Կիրովիային չեք ուզում ճանաչել»:

(Ձ ա յ ն ե բ. «Ճ ի շ տ հ»):

Յեթե այդպես ե, ապա թույլ տվեք ինձ ասելու ձեզ՝ յես

պատրաստ եմ ստորագրելու ընկ. Ստալինի ամենառադիկալ նախագիծը, յեթե նա ուզում է, վոր Կիրգիզիան, Թուրքեստանը և մնացած բոլոր ավտոնոմ հանրապետութիւնները դառնան անկախ հանրապետութիւններ: Այն ժամանակ նրանցից յուրաքանչյուրը հավասար սկզբունքներով կմտնի այս յերկրորդ պալատը: Իսկ ի՞նչ է ստացվում այստեղ: Ինչի՞ համար է ստեղծվում այս յերկրորդ պալատը: Նա ստեղծվում է նրա համար, վոր առանձին հանրապետութիւններն իրենց կարիքների ու իրենց հարկային ունակութիւնների համապատասխան ոգնութիւն ստանան կենտրոնական նախահաշիվից; և այն ժամանակ դուրս կգա, վոր բոլոր ավտոնոմ հանրապետութիւններն ունեն միայն մեկ նախահաշիվ՝ ՌՍՖՍՀ նախահաշիվը, նրանք ունեն միմիայն ՌՍՖՍՀ կենտրոնական կոմիսարիատները, նրանք ունեն միայն ՌՍՖՍՀ ընդհանուր Ժողովուրդները,—նրանք ավտոմատ կերպով կապված են ՌՍՖՍՀ հետ: Յեզդուրս է գալիս, վոր Համառուսական ԿԳԿ մեկ սենյակում նրանք բոլորը գնում են մեկ վորոշակի գծով, իսկ հետո նրանք գնում են մի այլ սենյակ և ասում, նրանք անկախ և առանձին հանրապետութիւններ են: Վոչ, թույլ տվեք, յեթե նրանք անկախ կլինեն, ապա նրանք իրոք անկախ են և այն ժամանակ դադարեցրեք կապը Ֆեդերացիայի հետ: Մեր կուլտուրականութիւնի ու քաղաքական գարգացման տարբեր աստիճանների պայմաններում յես անհրաժեշտ եմ համարում պահպանել Ֆեդերացիան, և այն ժամանակ, պետք է ասել, վոր յերկրորդ պալատը մտնում են վոչ թե ազգութիւնները, այլ պետական միավորութիւնները, և մենք վաղուց ասել ենք ընկ. Ստալինին, վոր մենք՝ Ուկրաինան՝ չենք ուզում հավասարաչափ ձայներ ունենալ ՌՍՖՍՀ հետ միասին: Վոչ, մենք շատ ավելի համեստ ենք, մենք բավական կլինե՞լինք, յեթե ՌՍՖՍՀ այդ պալատում բավարարվեր ձայների ²¹⁵ -ից վոչ ավելիով և ձայների այդ ²¹⁵ -ը բաշխեր զանազան հանրապետութիւնների միջև: Այս նրա գործն է: Իսկ յեթե ՌՍՖՍՀ ուզում է լիբերալիզմի ու դեմոկրատական նացիոնալիզմի որինակ տալ, վորով ընկ. Ստալինը փաստարկում է մեր յերկալատ սիստեմի դեմ, ապա թող ՌՍՖՍՀ իր Համառուսական ԿԳԿ կից հիմնի յերկրորդ պալատ, վորտեղ հրավիրվեն այդ հանրապետութիւնները:

Յեթե մենք վճռապես առարկում ենք ընկ. Ստալինի առաջարկի դեմ, ապա այդ առաջ չի գալիս նրանից, վոր թեկուզ

այս դեպքում մեր մեջ հավասարութիւն զգացումն ավելի պակաս է, քան մնացածների մեջ: Յեթե ուզում եք խոսել անկեղծ ու ազնիվ լեզվով, ապա չպետք է ստեղծել յերկրորդ պալատ և չպետք է ասել, թե նա կգարգանա առանձին հանրապետութիւնների իրավունքների ապահովման հիման վրա, ուստի յես պաշտպանում եմ հետեյալ առաջարկը. «Յերկրորդ պալատի մեջ մտնող պետմիավորութիւններից և վոչ մեկը չի կարող ունենալ բոլոր ձայների յերկու հինգերորդից ավելին»:

Ստալին.— Յես այս ուզումը համարում եմ հիմնական իր նշանակութեամբ: Յեթե համագումարն այն ընդունի, ապա յես պետք է ասեմ, վոր թեզիսները զլխելայր շուտ կարվեն: Ընկ. Ռակովսկին առաջարկում է յերկրորդ պալատը կառուցել այնպես, վոր նրա մեջ մտնեն պետական միավորութիւնների ներկայացուցիչները: Նա զանում է, վոր Ուկրաինան պետական միավորութիւն է, իսկ Բաշկիրիան՝ վոչ: Ինչո՞ւ: Հո մենք հանրապետութիւնների Ժողովուրդները չենք վերացնում: Մի՞թե Բաշկիրիայի ԿԳԿ-ն պետական հաստատութիւն չէ: Իսկ ինչո՞ւ Բաշկիրիան պետութիւն չէ: Մի՞թե Ուկրաինան կղաղարի պետութիւն լինելուց, յեթե նա մտնի Միութիւնի մեջ: Պետական Ֆեդերալիզմը մոլորեցրել է ընկ. Ռակովսկուն: Յեթե ազգութիւնները հավասար են իրենց իրավունքներով, յեթե նրանք ունեն լիզու, բարքեր, կենցաղ, սովորույթներ, յեթե այդ ազգութիւններն ստեղծել են իրենց պետական հաստատութիւնները՝ ԿԳԿ, ԺԿԽ, ապա մի՞թե պարզ չէ, վոր բոլոր ազգային կազմութիւնները պետական միավորութիւններ են: Յես կարծում եմ, վոր մենք չենք կարող հեռանալ հանրապետութիւնների ու ազգութիւնների հավասարութիւնի տեսակետից յերկրորդ պալատում, առանձնապես արևելյան ազգութիւնների վերաբերմամբ: Ընկ. Ռակովսկին, ըստ յերևույթին, հրապուրվում է Ֆեդերացիայի կառուցման պրուսական սիստեմով: Գերմանական Ֆեդերացիան կառուցված է այնպես, վոր պետութիւնների միջև բոլորովին հավասարութիւն չկա: Յես առաջարկում եմ գործը դնել այնպես, վոր դասակարգային ներկայացուցչութիւնի հետ միասին,— սա առաջին պալատն է, վոր ընտրվում է ազգութիւնների համամիութենական համագումարում,— մեզ մոտ լինի ազգութիւնների ներկայացուցչութիւն հավասարութիւնի սկզբունքով: Արևելյան Ժողովուրդները, վոր որգանապես կապված են Չինաստանի, չընդ-

կատանի հետ, նրանց հետ կապված են լեզվով, կրօնով, սովորու-
րույթներով և այլն, հեղափոխութեան համար կարևոր են ամե-
նից առաջ: Այս մանր ժողովուրդների տեսակարար կշիռը շատ
ավելի բարձր է, քան Ուկրաինայի տեսակարար կշիռը:

Յեթե մենք Ուկրաինայում մի փոքրիկ սխալ կատարենք,
այդ այնքան զգալի չի լինի Արևելքի համար: Իսկ բավական է մի
փոքրիկ սխալ կատարենք մի փոքրիկ յերկրում՝ Ալձարստանում
(120,000 բնակչութուն), վոր այդ արձագանգ գտնի Թյուրքիս-
տան և արձագանգ գտնի ամբողջ Արևելքում, վորովհետև Թյուրք-
քիան սերտորեն կապված է Արևելքի հետ: Բավական է մի փոք-
րիկ սխալ գործել կալմիկների փոքրիկ մարդի հանդեպ, վորոնք
կապված են Տիբեթի ու Չինաստանի հետ, և այդ շատ ավելի
վատ արձագանգ կբանի մեր աշխատանքի մեջ, քան Ուկրաինայի
նկատմամբ սխալվելը: Մենք կանգնած ենք Արևելքի հոգը շարժ-
ման հեռանկարի առաջ, և մեր աշխատանքը մենք պետք է ամե-
նից առաջ ուղղենք դեպի Արևելքի արթնացումը և չձեռնարկենք
վորեք այնպիսի բան, վորը թեկուզ հեռավոր կերպով, թեկուզ
անուղղակի կարողանա նվաստացնել յուրաքանչյուր առանձին,
ամենափոքրիկ ժողովրդի նշանակութունն արևելյան ծայրամա-
սերում: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այնպիսի մեծ յերկ-
րի կառավարման տեսակետից, ինչպես Հանրապետութունների
Միութունն է, վոր 140 միլիոն բնակչութուն ունի, ավելի արդա-
բացի, ավելի նպատակահարմար և հեղափոխականորեն ձեռնտու
կլինեն, ավելի լավ կլինեն կառուցել այնպես, վոր այնտեղ, յերկ-
րորդ պայտատում լինեն բոլոր հանրապետութունների ու ազգային
մարդերի հավասար ներկայացուցչութուն: Մեր ավտոնոմ հանրա-
պետութուններն 8 են, անկախները՝ նույնպես 8, Ռուսաստանը
կմանի իբրև հանրապետութուն, մարդերը 14 են, և սա յել կլի-
նի հենց այն յերկրորդ պայտառը, վոր կարտացուցի ազգութուն-
ների բոլոր պահանջներն ու կարիքները ու կշիռը այնպիսի
մեծ յերկրի կառավարումը: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր
ընկ. Ռակովսկու ուղղումը պետք է մերժել:

Ն ա խ ա գ ա հ ո գ .— Ո՞վ է կողմնակից ընկ. Ռակովսկու ուղղմա-
նը: Ո՞վ է դեմ: Ուղղումը մեծված է: Խոսք ունի ընկ. Մտալինը:

Մ տ ա լ ի ն .— Ընկերներ, զեկուցելով ձեզ ազգային հարցի
սեկցիայի աշխատանքների մասին, յես մոռացա հիշատակել յեր-
կու փոքրիկ լրացումների մասին ել, վորոնք չի կարելի չհիշա-

տակել: Պարագրաֆ 1-ի «դ» կետում, վորտեղ ասվում է, թե պետք
է հիմնովի առանց ըացառութեան բոլոր ազգային հանրապետու-
թյունների դե ազգային մարդերի ներկայացուցչութեան հատուկ
որգան հավասարութեան սկզբունքներով, պետք է ավելացնել.
«այդ հանրապետությունների մեջ մտնող բոլոր ազգությունների
հնարավոր հաշվառումով, նկատի ունենալով, վոր միքանի հան-
րապետություններում, վորոնք ներկայացված են յերկրորդ պա-
լատում, կան միքանի ազգություններ»: Որինակ, Թուրքեստանը:
Այնտեղ, բացի ուղբեկներից, կան Թուրքմեններ, կիրգիզներ և
այլ ազգեր, և անհրաժեշտ է ներկայացուցչութունն այնպես կազ-
մել, վոր ներկայացված լինի այդ ազգություններից յուրաքան-
չյուրը:

2-րդ լրացում 2-րդ հատվածի ամենավերջում: Նրա մեջ աս-
ված է,

«Նկատի ունենալով այն հսկայական կարևորությունը, վոր
ունի պատասխանատու աշխատողների գործունեյությունն ան-
կախ հանրապետություններում և ծայրամասերում ընդհանրապես
(տվյալ հանրապետութեան աշխատավորների կապի իրագործու-
մը Միութեան մնացած ամբողջ մասի աշխատավորութեան հետ),
համագումարը հանձնարարում է կենսական հոգ տանել այդ աշ-
խատողներին հատկապես խնամքով ընտրելու վրա, վորպեսզի
նրանց կազմն ամբողջովին ապահովի ազգային հարցի վերաբե-
րյալ՝ կուսակցութեան վորոշումների իրական կենսագործումը»:

Այնուհետև յերկու խոսք ընկ. Ռադեկի մի դիտողութեան առ-
թիվ, վոր նա արել է իր ձառում. դրա մասին ինձնից խնդրում
են արտահայտվել հայ ընկերները: Ըստ իս այդ դիտողութունը
չի համապատասխանում իրականութեան: Ընկ. Ռադեկն այստեղ
չի համապատասխանում ձևընդմենում են կամ կարող են ճշն-
ասաց, վոր հայերը Ադրբեյջանում ճնշում են կամ կարող են ճշն-
շել ադրբեյջանցիներին, ընդհակառակը, ադրբեյջանցիները կարող
են հայերին ճնշել Հայաստանում: Յես պետք է հայտարարեմ,
վոր ընդհանրապես նման յերևույթներ չեն լինում: Լինում է հա-
կառակ յերևույթ, վոր Ադրբեյջանում ադրբեյջանցիները, իբրև մե-
ծամասնութուն՝ ճնշում են հայերին և կոտորում, ինչպես այդ
տեղի յե ունեցել Նախիջևանում, վորտեղ մորթել են բոլոր հա-
յերին: Հայերն իրենց մոտ Հայաստանում մորթում են բոլոր Թուր-
քերին: Այսպես է յեղել Չանգեզուրում: Բայց վոր ոտար պե-
տութեան մեջ կոտորեն նրանք, ովքեր փոքրամասնութուն են
այդպիսի անբնական բաներ յերբեք չի յեղել:

I.

1. Կապիտալիզմի դարգացումը դեռ անցյալ դարում տենդենց էր հայտարարում միջազգայնացնելու արտադրութեան ու փոխանակութեան յեղանակները, վոչնչացնելու ազգային սահմանափակութիւնը, տնտեսապէս մերձեցնելու ժողովուրդներին և հըսկայական տերիտորիաներ աստիճանաբար միավորելու մի կապակցված ամբողջի մեջ: Կապիտալիզմի հետագա զարգացումը, համաշխարհային շուկայի զարգացումը, ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների պատրաստումը, կապիտալի արտահանումը և այլն՝ ել ավելի ուժեղացրին այդ տենդենցը, ամենատարբեր ժողովուրդների կապակցելով աշխատանքի միջազգային բաշխման ու ամենակողմանի փոխադարձ կախման կապերով: Քանի վոր այդ պրոցեսն արտացոլում էր արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը, քանի վոր այն դյուրացնում էր ազգային մեկուսացման ու զանազան ժողովուրդների շահերի հակադրութեան վոչնչացումը՝ նա եր և մնում է պրոգրեսսիվ պրոցես, վորովհետև նա նախապատրաստում է ապագա համաշխարհային սոցիալիստական տնտեսութեան նյութական նախադրյալները:

2. Սակայն այդ տենդենցը զարգանում էր յուրահասուկ ձեւերով, վորոնք ամենեւին չէին համապատասխանում նրա պատմական ներքին իմաստին: Ժողովուրդների փոխադարձ կախումն ու տերիտորիաների տնտեսական միավորումը կապիտալիզմի զարգացման ընթացքում սահմանվում էին վոչ թե ժողովուրդների գործակցութեան միջոցով, իբրև իրավահավասար միավորների, այլ վորոշ ժողովուրդները՝ մյուսներին հպատակելու կարգով, պակաս զարգացած ժողովուրդներին ավելի զարգացած ժողովուրդների կողմից ճնշելու և շահագործելու կարգով: Քաղութային կողոպուտներ ու զավթումներ, ազգային ճնշում ու անհավասարութիւն, իմպերիալիստական կամայականութիւնն ու բռնութիւնն, գաղութային ստրկութիւնն ու ազգային իրավազրկութիւնն, վերջապէս, «քաղաքակրթված» ազգերի փոխադարձ պայքար «չքաղաքակրթված» ժողովուրդների վրա խշխելու համար՝

սրանք են այն ձեւերը, վորոնց շրջանակներում ընթացել է ժողովուրդների տնտեսական մերձեցման պրոցեսը: Այս պատճառով միավորման տենդենցի հետ միասին աճում էր այդ միավորման բունի ձեւերի վոչնչացման տենդենցը, պայքարը հանուն ճնշված գաղութների ու կախյալ ազգութիւնների ազատագրման իմպերիալիստական ճնշումից: Վորչափով վոր այդ յերկրորդ տենդենցը նշանակում էր ճնշված մասսաների վրդովմունք ընդդէմ միավորման իմպերիալիստական ձեւերի, վորչափով վոր այն պահանջում էր ժողովուրդների միավորում գործակցութեան ու կամավոր դաշնադրութեան սկզբունքներով, այդ եր և մնում է իբրև պրոգրեսսիվ տենդենց, վորովհետև այն հոգեկան նախադրյալներ է պատրաստում ապագա համաշխարհային սոցիալիստական տնտեսութեան համար:

3. Կապիտալիզմին հատուկ ձեւերով արտահայտված այս յերկու հիմնական տենդենցների պայքարը վերջին հարյուրամյակում լցնում է բազմազգի բուրժուական պետութիւնների պատմութեանը: Այս յերկու տենդենցների անհաշտելի հակասութեանը կապիտալիստական զարգացման շրջանակներում հանդիպացավ կապիտալիստական գաղութային պետութիւնների ներքին իբրև հիմք բուրժուական գաղութային պետութիւնների ներքին սնանկութեան և որդանական անկայունութեան: Անխուսափելի կոնֆլիկտներն այդ պետութիւնների ներքում և անխուսափելի պատերազմներն այդ պետութիւնների միջև, հին գաղութային պետութիւնների քայքայումն ու նորերի առաջացումը, նոր վաղըր գաղութների հետեւից և բազմազգի պետութիւնների նոր քայքայումը, վոր հանգում է աշխարհի քաղաքական քարտեզի նոր ձևավորման՝ սրանք են այս նոր հիմնական հակասութեան հետեւանքները: Հին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Թյուրքիայի տապալումը՝ մի կողմից, գաղութային այնպիսի պետութիւնների պատմութեանը, ինչպէս Մեծ Բրիտանիան և հին թիւրքների պատմութեանը, վերջապէս իմպերիալիստական «մեծ» Գերմանիան՝ մյուս կողմից, վերջապէս իմպերիալիստական «մեծ» պատերազմը և գաղութային ու վոչ-իրավագոր ժողովուրդների հեղափոխական շարժման աճումը, — այս բոլորը և սրանց նման փաստերն ակնառութեամբ վկայում են բուրժուական բազմազգի պետութիւնների անհաստատութեան ու անկայունութեան մասին:

Այսպիսով, ժողովուրդների տնտեսական միավորման պրոցեսի և այդ միավորման իմպերիալիստական յեղանակների միջի անհաշտելի հակասութեանը վորոշեց բուրժուազիայի անկարողու-

թյունը, անոգնականությունը, անզորությունը՝ ճիշտ մոտեցում գտնելու դեպի ազգային հարցի լուծումը:

4. Մեր կուսակցությունը հաշվի առավ այս հանգամանքները՝ ազգային հարցի իր քաղաքականության հիմք դարձնելով ազգերի ինքնորոշման իրավունքը, ժողովուրդների ինքնուրույն պետական գոյության իրավունքը: Դեռ իր գոյության առաջին սրբերին, իր առաջին համագումարում (1898 թ.), յերբ ազգային հարցի գծով կապիտալիզմի հակասությունները դեռևս սպառնչ պարզությամբ չէին վորոշվել, կուսակցությունն ազգերին վերապահում էր այս անբաժան իրավունքը: Հետագայում նա անխախտորեն պնդում էր իր ազգային ծրագիրը հատուկ վորոշումներում, իր համագումարներում ու կոնֆերանսներում մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը: Իմպերիալիստական պատերազմը և նրա հետ կապված հեղափոխական հզոր շարժումը գաղութներում սոսկ նոր հաստատում էին տալիս կուսակցության վորոշումներին ազգային հարցում: Այդ վորոշումների խմատը հետեւյալն է. ա) վճռականապես բացասել հարկադրանքի բոլոր և ամեն տեսակ ձևերն ազգությունների վերաբերմամբ, բ) ընդունել ժողովուրդների հավասարությունն ու ինքնիշխանությունը իրենց բախտի անորինման մեջ, գ) ընդունել այն դրությունը, վոր ժողովուրդների կայուն միավորությունը կարող է իրագործվել սոսկ համագործակցության ու կամավորության սկզբունքներով, դ) հռչակել այն ճշմարտությունը, վոր նման միավորման իրականացումը հնարավոր է միայն կապիտալի իշխանությունը տապալելուց հետո:

Մեր կուսակցությունն իր աշխատանքի մեջ այս պատագրական ազգային ծրագիրը չէր դադարում հակադրելու ինչպես ցարիզմի բացահայտ ճնշող քաղաքականության, այնպես էլ մենշևիկների ու եսերների կիսատ, կիսաիմպերիալիստական քաղաքականության: Յեթե ցարիզմի ռուսացման քաղաքականությունն անզուր ստեղծեց ցարիզմի ու հին Ռուսաստանի ազգությունների միջև, իսկ մենշևիկների ու եսերների կիսաիմպերիալիստական քաղաքականությունը հանդեպ այդ ազգությունների լավագույն տարրերի հեռացմանը կերենսկիականությունից, ապա մեր կուսակցության ազատագրական քաղաքականությունը նվաճեց այդ ազգությունների լայն մասսաների համակրանքն ու ոժանդակությունը ցարիզմի ու ռուսական իմպերիալիստա-

կան բուրժուազիայի դեմ պայքարելիս: Հազիվ թե կարելի լինի կասկածել, վոր այս համակրանքն ու այս ոժանդակությունը հանդիսացան մեկն այն վճռական մոմենտներեց, վորոնք վորոշեցին մեր կուսակցության հաղթանակը հոկտեմբերյան որերին:

5. Հոկտեմբերյան հեղափոխությունը գործնապես ամփոփեց մեր կուսակցության վորոշումներն ազգային հարցում: Տապալելով կալվածատերերի ու կապիտալիստների՝ ազգային ճնշման հիմնական կրողների իշխանությունը և իշխանության գլուխ դնելով պրոլետարիատին, Հոկտեմբերյան հեղափոխությունը մի հարվածով փշրեց ազգային ճնշման շղթաները, շուտ ավելց ժողովուրդները հին հարաբերությունները, խախտեց հին ազգային թշնամանքը, հող պատրաստեց ժողովուրդների գործակցության համար և հոգուտ ուս պրոլետարիատի նվաճեց վոչ միայն Ռուսաստանի, այլև Յելլորպայի ու Ասիայի նրա ռաարագրի յեղբայրների վստահությունը: Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, վոր առանց այդպիսի վստահության ուս պրոլետարիատը չէր կարող հաղթել կոլչակին և Դենիկինին, Յուդենիչին ու Վրանդեկին: Մյուս կողմից՝ անկասկած է, վոր ճնշված ազգությունները չէին կարող հասնել իրենց ազատագրության առանց Ռուսաստանի կենտրոնում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու, Ազգային թշնամանքը և ազգային ընդհարումներն անխուսափելի յեն, անհաղթելի, քանի դեռ իշխանության գլուխ է կանգնած կապիտալը, քանի դեռ մանր բուրժուազիան և ամենից առաջ նախկին «տիրապետող» ազգի գյուղացիությունը՝ չի ազգայնական նախապաշարմունքներով, դնում են կապիտալիստների հետեից, և ընդհակառակը, ազգային խաղաղությունն ու ազգային ազատությունն ապահովված կարելի չէ համարել, յեթե գյուղացիությունն ու այլ մանր-բուրժուական խավեր գնում են պրոլետարիատի հետեից, այսինքն՝ յեթե ապահովված է պրոլետարիատի դիկտատուրան: Ուստի խորհուրդների հաղթանակը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը հանդիսանում են այն բազան, այն պատվանդանը, վորի հիման վրա կարող է կառուցվել ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը միասնական պետական միության մեջ:

6. Մակայն Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքները չեն սպառվում ազգային ճնշումը վերացնելով, ժողովուրդների միավորման համար հող ստեղծելով: Իր վարդացման ընթացքում

Հոկտեմբերյան հեղափոխությունը դարձյալ ձևեր ե մշակել այդ միավորման համար, նշել ե այն հիմնական գծերը, վորոնց համաձայն պետք ե կառուցվի ժողովուրդների միավորումը մեկ միութենական պետության մեջ: Հեղափոխության առաջին շրջանում, յերբ ազգությունների աշխատավորական մասսաներն առաջին անգամ իրենց զգացին ազգային ինքնուրույն մեծություններ, մինչդեռ քաղաքակրթյա ինտելեկտուալի սպառնալիքը դեռևս ունեւ վտանգ չէր ներկայացնում՝ ժողովուրդների համագործակցությունը դեռևս միանգամայն վորոշակի, խստորոշ սահմանված ձև չուներ: Քաղաքացիական պատերազմի ե ինտելեկտուալի շրջանում, յերբ ազգային հանրապետությունների ռազմական ինքնապաշտպանության շահերը հանդես եյին գալիս առաջին պլանի վրա, մինչդեռ անտեսական շինարարության հարցերը դեռևս որակարգի հարցեր չէյին, համագործակցությունը ռազմական դաշինքի ձև ընդունեց: Վերջապէս, հետպատերազմյան շրջանում, յերբ պատերազմից քայքայված արտադրողական ուժերի վերականգնման հարցերն առաջնակարգ դարձան, ռազմական դաշինքը լրացվեց անտեսական դաշինքով: Ազգային հանրապետությունների միավորումը խորհրդային Հանրապետությունների Միության մեջ ավարտական վուրն ե այն համագործակցության ձևերի զարգացման մեջ, վորն այս անգամ ընդունեց ժողովուրդների ռազմատնտեսական ե քաղաքական միավորման բնույթ՝ խորհրդային միասնական բազմազգի պետության ներսում:

Այսպիսով, պրոլետարիատը հանձին խորհրդային հասարակակարգի գտալ ազգային հարցի ճիշտ լուծման բանալին, նա հանձին նրա գտալ կայուն բազմազգի պետություն կազմակերպելու ուղին՝ ազգային իրավահավասարության ու կամավորության սկզբունքով:

7. Սակայն գտնել ազգային հարցի ճիշտ լուծման բանալին դեռևս չի նշանակում լուծել այն ամբողջությամբ ե վերջնականապես սպառել այդ վորոշումը նրա կոնկրետ գործնական իրականացումով: Հոկտեմբերյան հեղափոխության առաջադրած ազգային ծրագրի ճիշտ կենսագործման համար դեռևս անհրաժեշտ ե հաղթահարել այն խոչընդոտները, վոր մեզ ժառանգություն ե տվել ազգային ճնշման նախընթաց շրջանը ե վորոնք չեն կարող հաղթահարվել կարճ ժամանակամիջոցում մեկ հարվածով:

Այս ժառանգությունը, նախ՝ մեծապետական շովինիզմի մնացորդներն են, վոր վելիկոուսների նախկին արտոնյալ դրության արտացոլումն ե: Այս մնացորդները դեռևս ապրում են մեր կենտրոնական ու տեղական խորհրդային աշխատողների պուլսներում, նրանք բուն են դրել մեր կենտրոնական ու տեղական պետական հաստատություններում, նրանք սժանդակություն են ստանում վելիկոուսական-շովինիստական «նոր» սմենովելուվյան հովերի կերպարանքով, վորոնք ավելի ու ավելի յեն սեփեղանում նեպի կապակցությամբ: Գործնականապես նրանք արտահայտվում են ուսու խորհրդային չինոֆիլիների գոսպարնամարնական, անհույժ-բյուրոկրատական վերաբերմունքի մեջ դեպի ազգային հանրապետությունների կարիքներն ու պահանջները: խորհրդային բազմազգի պետությունը կարող ե դառնալ իրոք ամուր, իսկ ժողովուրդների համագործակցությունը նրանում՝ իրոք յեղբայրական միայն այն դեպքում, յերբ այդ մնացորդները գուրս վտարվեն մեր պետական հաստատությունների պրակտիկայից վճռական ու անդարձ կերպով: Մի շարք ազգային հանրապետություններում (Ուկրաինա, Բելոուսիա, Ադրբեջան, Թուրքեստան) դրությունը բարդանում ե նրանով, վոր խորհրդային իշխումության հիմնական հենարանը հանդիսացող բանվոր դասակարգի մի նշանակելի մասը պատկանում ե վելիկոուս ազգին: Այս շրջաններում քաղաքի ու գյուղի, բանվոր դասակարգի ու գյուղացիության գոգումն ամենախիստ խոչընդոտի յե հանդիպում վելիկոուսական շովինիզմի մնացորդների մեջ ինչպես կուսակցական, այնպես ե խորհրդային որդաններում: Այս պայմաններում ուսական կուլտուրայի առավելությունների վերաբերյալ խոսակցությունները ե այն դրության առաջադրումը, թե ուսական ավելի բարձր կուլտուրայի հաղթանակն անխուսափելի յե ավելի հետամնաց ժողովուրդների (ուկրաինական, ադրբեջանյան, ուզբեկական, կիրգիզական ե այլ) կուլտուրայի նկատմամբ՝ վոչ այլ ինչ ե, քան մի վորձ ամբացնելու վելիկոուսական ազգի տիրապետությունը: Ուստի վելիկոուսական շովինիզմի մնացորդների դեմ վճռական պայքար մղելը մեր կուսակցության առաջին հերթական խնդիրն ե:

Այս ժառանգությունը, յերկրորդ, հանդիսանում ե Հանրապետությունների Միության ազգությունների փաստական, այսինքն անտեսական ու կուլտուրական անհավասարությունը:

Ազգային իրավական հավասարությունը, վոր ձեռք է բերել
Հոկտեմբերյան հեղափոխությունը, ժողովուրդների մեծագույն
նվաճումն է, սակայն այս հավասարությունն ինքնին չի լուծում
ազգային հարցը: Մի շարք հանրապետություններ ու ժողո-
վուրդներ, վորոնք չեն անցել կամ համարյա չեն անցել կապի-
տալիզմը, վորոնք չունեն կամ համարյա չունեն իրենց պրոլե-
տարիաաը, վորոնք այդ պատճառով հեռ են մնացել տնտեսական
ու կուլտուրական տեսակետից, ի վիճակի չեն ամբողջովին ող-
տագործելու ազգային իրավահավասարությամբ նրանց արված
իրավունքներն ու հնարավորությունները, ի վիճակի չեն բարձ-
րանալու զարգացման ասիլի բարձր աստիճանը և այդպիսով
հասնելու առաջ անցած ազգություններին՝ առանց դրսի իրա-
կան ու տեական ողնության: Փաստական այս անհավասարու-
թյան պատճառները թագնված են վոչ միայն այս ժողովուրդ-
ների պատմության, այլև ցարիզմի ու ռուսական բուրժուազիա-
յի քաղաքականության մեջ, վորոնք ձգտում էին ծայրագա-
վառները զարձնել բացառապես հուժքի բազաներ, վորոնց շա-
հազործում էին արդյունաբերական տեսակետից զարգացած
կենտրոնական շրջանները: Կարճ ժամանակամիջոցում հաղթահա-
րել այս անհավասարությունը, մեկ-յերկու տարում վերացնել
այս ժառանգությունը՝ անկարելի չէ: Դեռևս մեր կուսակցության
X համագումարը մասնանշել է, վոր «ազգային փաստական ան-
հավասարության վերացումը տեական պրոցես է, վորը պահան-
ջում է հաստատուն ու համառ պայքար մղել ազգային ճնշման
ու գաղութային ստրկության բոլոր մնացորդների դեմ»: Սակայն
հաղթահարել այն պետք է անպայման: Յեզ հաղթահարել այն
կարելի չէ սոսկ ռուս պրոլետարիատի իրական ու տեական սզ-
նությամբ Միության հեռամնաց ժողովուրդներին՝ նրանց արն-
տեսական ու կուլտուրական բարգավաճման գործում: Այս ող-
նությունն առաջին հերթին պետք է արտահայտվի նրանով,
վոր մի շարք պրակտիկ միջոցներ պիտի ձեռք առնվին առաջնե-
րում ճնշված ազգությունների հանրապետություններում ստեղ-
ծելու արդյունաբերական ոջախներ՝ առավելագույն չափով ներ-
գրավելով տեղական բնակչությանը: Վերջապես, այս պայքարը,
X համագումարի բանաձևի համաձայն, պետք է ընթանա աշխա-
տավորական մասսաների պայքարին զուգընթաց՝ ընդդեմ նեպի
հեռանալով ուժեղացող տեղական ու չեկվոր շահագործիչ վեր-

նախալիքի, հանուն իրենց սոցիալական դիրքերի ամրացման:
Դանի վոր այս հանրապետությունները գերագանցապես գյու-
ղատնտեսական շրջաններ են, սոցիալական ներքին միջոցա-
ռումները պետք է ամենից առաջ ընթանան աշխատավորական
մասսաներին պետական ազատ հողային ֆոնդով բավարարելու
ուղղությամբ: Առանց սբա հիմք չկա հուսալու, վոր ժողովուրդ-
ների կանոնավոր ու կայուն համագործակցությունը կարգի
կզրվի միասնական գաշտակից պետության շրջանակներում:
Ռուսի ազգությունների փաստական անհավասարության վերաց-
ման համար պայքարելը, հեռամնաց ժողովուրդների կուլտուրա-
կան ու տնտեսական մակարդակի բարձրացման համար պայքա-
րելը մեր կուսակցության յերկրորդ հերթական խնդիրն է:

Այս ժառանգությունը, վերջապես, հանդիսանում է նացիոնա-
լիզմի մնացորդները մի ամբողջ շարք ժողովուրդների մեջ, վորոնք
անց են կացրել ազգային ճնշման ծանր լուծը և չեն կարողացել
դեռևս ազատվել ազգային հին վիրավորանքների զգացմունքից:
Այս մնացորդների պրակտիկ արտահայտությունն է հանդիսա-
նում առաջներում ճնշված ժողովուրդների ազգային վորոշ սաա-
բացումն ու կատարյալ վաստակության բացակայությունը դեպի
ռուսներից յեկող միջոցառումները: Սակայն վորոշ հանրապետու-
թյուններում, վորոնց կազմի մեջ կան միքանի ազգություններ,
այս պաշտպանողական նացիոնալիզմը հաճախ փոխարկվում է
հարձակողական նացիոնալիզմի, ասիլի ուժեղ ազգության թուղ
շովինիզմի՝ ուղղված ընդդեմ այդ հանրապետությունների թույլ
ազգությունների: Վրացական շովինիզմը (Վրաստանում)՝ ուղղը-
ված ընդդեմ հայերի, ռսերի, աջարցիների ու արխազների, աղբը-
բեջանյան շովինիզմն (Սպրբեջանում)՝ ուղղված ընդդեմ հայերի,
ուզբեկական շովինիզմը (Բուխարայում և Խորեզում)՝ ուղղված
ընդդեմ թուրքմենների և կերգիզների, հայկական շովինիզմը և
այլն, — այս բոլորը շովինիզմի տեսակներն են, վորոնք միաժա-
մանակ խրախուսվելով նեպի ու մրցության պայմաններում, մե-
ծագույն չարիք են, վորն սպառնում է վորոշ ազգային հանրա-
պետություններ զարձնել թշնամանքի ու դժտության ասպարեզ:
Խոսել անգամ չարժի, վոր այս բոլոր յերևույթները կասեցնում
են ժողովուրդների փաստական միավորման գործը պետական
միասնական միության մեջ: Դանի վոր նացիոնալիզմի մնացորդ-
ները յուրահատուկ մի ձև են վերիկուսուսական շովինիզմի հան-

դեպ պաշտպանվելու համար, վճռական պայքարը վերկոտուհան կան շովինիզմի դեմ ամենաստույգ միջոցն և ազգայնական մնացորդների հաղթահարման համար: Իսկ քանի վոր այդ մնացորդները փոխարկվում են տեղական շովինիզմի՝ ուղղված ընդդեմ ազգային թույլ խմբակների առանձին հանրապետություններում, նրանց դեմ ուղղակի պայքարելը կուսակցություն անդամների պարտականությունն է: Այս պատճառով ազգայնական մնացորդների և ամենից առաջ այդ մնացորդների շովինիստական ձևերի դեմ պայքարելը մեր կուսակցության յերբորդ հերթական խնդիրն է:

8. Հնի ժառանգություն ցայտուն արտահայտություններից մեկը պիտի համարել այն փաստը, վոր կենտրոնում ու տեղերում խորհրդային չինոֆիլիկների մի նշանակելի մասը Հանրապետությունների Միությունը գնահատում և վոչ թե իբրև պետական հավասար միավորների մի միություն, վոր կոչված և ամահովելու ազգային հանրապետությունների ազատ զարգացումը, այլ իբրև մի քայլ՝ վերացնելու այդ հանրապետությունները, իբրև այսպես կոչված՝ «միասնական-անբաժանելի»-ի ստեղծման սկիզբ:

Հնի ժառանգության նույնպիսի արդյունք պիտի համարել ՌՍՖՍՀ միքանի գերատեսչությունների ձգտումը՝ իրենց յնթարկելու ամտոնոմ հանրապետությունների ինքնուրույն կոմիսարիատները և ճանապարհ հարթելու նրանց վերացման համար:

Այսպիսի ըմբռնումը դատապարտելով իբրև հակապրոիտարական ու ռեակցիոն ըմբռնում, և ազդարարելով ազգային հանրապետությունների գոյություն ու հետագա զարգացման բացարձակ անհրաժեշտությունը, համազումարը կուսակցության անդամներին կոչ և անում հետևելու, վոր հանրապետությունների միավորումն ու կոմիսարիատների ձուլումը շովինիստորեն տրամադրված խորհրդային չինոֆիլիկները չզոտագործեն՝ իբրև ազգային հանրապետությունների անտեսական ու կուլտուրական պահանջներն անտեսելու նրանց փորձերի մի ծածկոց: Կոմիսարիատների ձուլումը խորհրդային ապարատի քննությունն և, յեթե այս փորձն իրականում ստանար մեծապեսական ուղղություն, այն դեպքում կուսակցությունը հարկադրված կլիներ նման աղճատման դեմ ամենավճռական միջոցներ ձեռք առնել, նույնիսկ հարց դնելով այն մասին, վոր վերաքննվի միքանի կոմիսարիատների ձուլման հարցը, մինչև վոր խորհրդային ապարատը

պատշաճ ձևով վերադաստիարակվի մանր ու հետամնաց ազգությունների կարիքներին ու պահանջներին իսկական պրոլետարական ու իսկական յիքրայրական ուղղություն դարձնելու վողով:

9. Հանրապետությունների Միությունը, վոր ստեղծված և առանձին հանրապետությունների բանվորների ու գյուղացիների հավասարություն ու կամավորություն սկզբունքով, պրոլետարիատի առաջին փորձն և անկախ յերկրների միջազգային փոխհարաբերությունները կարգավորելու գործում և առաջին քայլը դեպի Աշխատանքի ապագա համաշխարհային խորհրդային հանրապետություն ստեղծումը: Քանի վոր Հանրապետությունների Միությունը ժողովուրդների համակցությունն է և, նրանց համագործակցության նոր ձև միասնական դաշնակից պետություն մեջ, վորի շրջանակներում պետք վերացվեն վերը նկարագրված մնացորդները ժողովուրդների միատեղ աշխատանքի պրոցեսում, Միության բարձրագույն որդանները պետք և կառուցվեն այնպես, վոր նրանք ամբողջությամբ արտացոլեն Միության բոլոր ազգությունների վոչ միայն ընդհանուր կարիքներն ու պահանջները, այլև առանձին ազգությունների հատուկ կարիքներն ու պահանջները: Այս պատճառով Միության գոյություն ունեցող կենտրոնական որդանների հետ միասին, անկախ ազգությունից, պետք և ստեղծվի ազգությունների ներկայացուցչություն հատուկ որդան հավասարության սկզբունքով: Միության կենտրոնական որդանների այսպիսի կառուցվածքը լիակատար հնարավորություն կտար արթնորեն ունկնդրելու ժողովուրդների կարիքներին ու պահանջներին, ժամանակին անհրաժեշտ ոգնություն ցույց տալու նրանց, ստեղծելու փոխադարձ կատարյալ վստահության պայմաններ և, այսպիսով, ամենամանրվանդակն ձևով վերացնելու վերը հիշված ժառանգությունը:

10. Յիշելով վերը ասվածից, համազումարը հանձնարարում և կուսակցության անդամներին իբրև գործնական միջոցներ ձեռք առնել, վոր

ա) Միության կենտրոնական որդանների կառուցման ժամանակ ապահովվի առանձին հանրապետությունների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը ինչպես նրանց փոխադարձ հարաբերություններում, այնպես էլ Միության կենտրոնական իշխանությունների վերաբերմամբ:

բ) Միութեան բարձրագույն որգանների սիստեմում հիմնովի առանց բացառութեան բոլոր ազգային հանրապետութեանները ու ազգային մարզերի ներկայացուցչութեան հատուկ որգան հավասարութեան սկզբունքով՝ այդ հանրապետութեանների կազմի մեջ մտնող բոլոր ազգութեանների ներկայացուցչութեան հնարավոր հաշվառումով:

դ) Միութեան գործադիր մարմինները կառուցվեն այնպիսի հիմունքներով, վերոնք ապահովեն հանրապետութեանների ներկայացուցիչների առաջ մասնակցութեանը նրանց մեջ և Միութեան ժողովուրդների կարիքների ու պահանջների բավարարումը:

դ) հանրապետութեաններին արամադրվեն բավական լայն ֆինանսական ու մասնավորապես բյուջեային իրավունքներ, վերոնք ապահովեն նրանց սեփական ազմինիստրատիվ, կուլտուրական ու անտեսական նախաձեռնութեան ցուցաբերման հնարավորութեանը:

յ) ազգային հանրապետութեանները ու մարզերի որգանները կառուցվեն գերազանցապես տեղական մարզկանցից, վերոնք գիտեն համապատասխան ժողովուրդների լեզուն, կենցաղը, բարքերն ու սովորույթները:

զ) հրատարակվեն հատուկ որենքներ, վերոնք ապահովեն մայրենի լեզվի գործածութեանը տեղական ու ազգային բնակչութեանն ու ազգային փոքրամասնութեաններին սպասարկող բոլոր պետական որգաններում ու հաստատութեաններում, — որենքներ, վերոնք հետապնդեն ու հեղափոխական ամբողջ զաժանութեամբ պատժեն ազգային իրավունքների ու առանձնապես ազգային փոքրամասնութեանների իրավունքների բոլոր խախտողներին:

ե) Կարմիր բանակում ուժեղացվի գաստիարակման աշխատանքը՝ Միութեան ժողովուրդների յեղբայրութեան ու համերաշխութեան զազափարներն արմատացնելու իմաստով և զործնական միջոցառումներ ձեռնարկվին կազմակերպելու ազգային գործառնակ՝ պահպանելով այն բոլոր միջոցները, վեր անհրաժեշտ են հանրապետութեանների լիակատար ինքնապաշտպանութեան համար:

2.

1. Մեր կուսակցութեան կազմակերպութեանների զարգացումը ազգային հանրապետութեանների մեծ մասում ընթանում է այնպիսի պայմաններում, վերոնք լրիվ չեն նպաստում նրանց աճմանն ու ամրացմանը: Այդ հանրապետութեանների անտեսական հետաքննարկութեանը, ազգային պրոլետարիատի սակավաթիվ

լինելը, տեղական մարզկանցից հին կուսակցական աշխատողների կազմերի պակասութեանը կամ նույնիսկ բացակայութեանը, մայրենի լեզվով մարքսիստական լուրջ գրականութեան պակասը, կուսակցական-գաստիարակական աշխատանքի թուլութեանը, վերջապես, սոցիալիզմ-սոցիոնալիստական ավանդների մնացորդների առկայութեանը, վերոնք դեռևս չեն չքացել տեղական կոմունիստների մեջ վերոշակի թեքում են առաջացրել դեպի ազգային առանձնահատկութեանների գերազանհատումը, դեպի պրոլետարիատի գասակարգային շահերի թերազանհատումը, դեպի նացիոնալիզմը: Այս յերևույթն առանձնապես վտանգավոր դառնում է միջանի ազգութեան ունեցող հանրապետութեաններում, վերոնք այն յերբեմն ընդունում է ավելի ուժեղ ազգութեան կոմունիստների դեպի շովինիզմ թեքվելու բնույթ, մի թեքում, վերն իր սուր ծայրով ուղղված է ընդդեմ թույլ ազգութեանների կոմունիստների (Վրաստան, Ադրբեյջան, Բուխարա, Խորհով): Ազգայնականութեան թեքումը փաստակար և այն տեսակետից, վեր այն արգելափակում ազգային պրոլետարիատի ազատագրման պրոցեսը ազգային բուրժուազլայի զազափարական ազդեցութեանից, դժվարացնում է զանազան ազգութեանների պրոլետարների համախժման գործը միասնական ինտերնացիոնալ կազմակերպութեան մեջ:

2. Մյուս կողմից՝ ինչպես կուսակցութեան կենտրոնական հաստատութեաններում, այնպես էլ ազգային հանրապետութեանների կոմկուսակցութեանների կազմակերպութեաններում սուսական ծաղում ունեցող կուսակցական հին աշխատողների մեծաքանակ կազմերի-առկայութեանը, վերոնք ծանոթ չեն այդ հանրապետութեանների աշխատավորական մասսաների բարքերին, սովորույթներին ու լեզվին և այդ պատճառով մշտապես չեն, վեր զգայուն են դեպի նրանց պահանջները՝ մեր կուսակցութեան մեջ առաջացրել և թեքում դեպի ազգային առանձնահատկութեանների ու ազգային լեզվի թերազանհատումը կուսակցական աշխատանքում, մեծամիտարհամարական վերաբերմունք դեպի այդ առանձնահատկութեանները, թեքում դեպի վելիկոբուսական շովինիզմը: Այս թեքումը փաստակար և վոշ միայն նրա համար, վեր այն, արգելափակում ազգային լեզուն իմացող տեղական մարզկանցից կոմունիստական կազմեր կազմելու գործը, կուսակցութեան համար ազգային հանրապետութեանների պրո-

լեռարական մասսաներից կտրվելու վտանգ և ստեղծում, այլև ամենից առաջ այն պատճառով, վոր այն սնում ու աճեցնում ե վերը նկարագրված թեքումը դեպի նացիոնալիզմը, դժվարացնելով նրա դեմ պայքարելը:

3. Դատապարտելով այս յերկու թեքումն ել, իբրև ֆասա-կար ու վտանգավոր թեքումներ կոմունիզմի դործի համար, և կուսակցութեան անդամների ուշադրութեանը հրավիրելով վերի-կուսակցական շովինիզմի թեքման առանձին ֆասսի ու առանձին վտանգի վրա, համազումարը կոչ ե անում կուսակցութեանը շուտափութ վերացնելու հնի այս մնացորդները մեր կուսակցա-կան շինարարութեան մեջ:

Համազումարն իբրև գործնական միջոցներ հանձնարարում ե կենտկոմին կենսագործել հետևյալը.

ա) ազգային հանրապետութեանների տեղական կուսակ-ցական աշխատողներից ստեղծել մարքսիստական բարձրա-գույն տիպի խմբակներ.

բ) զարգացնել մայրենի լեզվով մարքսիստական սկզբ-բունքային գրականութեան.

գ) ուժեղացնել Արևելքի ժողովուրդների Համալսարանը և նրա բաժանմունքները տեղերում.

դ) ազգային կոմկուսակցութեանների կենտկոմներին կից ստեղծել հրահանգչական խմբակներ տեղական աշխա-տողներից.

յե) զարգացնել մայրենի լեզվով մասսայական կուսակ-ցական գրականութեան.

զ) ուժեղացնել կուսակցական-դատարակչական աշխա-տանքը հանրապետութեաններում.

ե) ուժեղացնել աշխատանքը յերիտասարդութեան մեջ հանրապետութեաններում:

4. Նկատի ունենալով այն հսկայական կարևորութեանը, վոր ունի պատասխանատու աշխատողների գործունեութեանը ավ-տանում և անկախ հանրապետութեաններում ու ծայրամասերում ընդհանրապես (տվյալ հանրապետութեան աշխատավորների կապի իրագործումը մնացած ամբողջ միութեան աշխատավորների հետ), համազումարը հանձնարարում ե կենտկոմին հոգ տանել այդ աշ-խատողների հատուկ խնամքով ընտրութեան վրա այն հաշվով, վոր նրանց կազմն ամբողջութեամբ ապահովի ազգային հարցի վերաբերյալ կուսակցութեան վորոշումների իրական կենսա-գործումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Ձեկուցում ՌԿ(բ)Կ XII համագումարին	3
Ցեղրափակման խոսք	27
XII համագումարի բանաձևը ազգային հարցի վերաբերյալ	44

